

90ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ





ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՑՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ

1-8 ՕԳՈՍՏՈՍ 2009, ԵՐԵՎԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչության նախաձեռնությամբ տեղի ունեցող համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը սպասուած եւ միշտ յաջողութեամբ պսակուող աւանդութիւն մըն են Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ, ուր հարիւրաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ, աշխարհի չորս ծագերէն, կը մէկտեղուին մրցելու, բարեկամանալու եւ իրենց հայկականութիւնը զօրացնելու համար: Մարզախաղերը տեղի կ'ունենան չորս տարին անգամ մը, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիղ ունեցող տարբեր երկիրներու մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերը տեղի պիտի ունենան Երեւան, Հայաստանի մէջ, 1էն 8 Օգոստոս 2009ին: Մարզախաղերուն պիտի մասնակցին մօտաւորապէս 700 մարզիկներ, որոնք Երեւանի մէջ պիտի համախմբուին՝ ժամանելով աշխարհի զանազան երկիրներէ, իրենց հայրենի հողին վրայ մրցելու եւ անոր հանդէպ իրենց ունեցած սէրն ու կարօտը յագեցնելու համար: Մարզախաղերը իրենց ներկայութեամբ պիտի քաջալերեն ծնողներ եւ բարեկամներ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատուներ եւ համակիրներ:

Մարզախաղերը պիտի ընդգրկեն հետեւեալ մարզաձեւերը.-

- * Պասքեթպոլ - Արական եւ իգական
- * Կրտսերներու պասքեթպոլ - Արական
- * Ֆութպոլ - Արական
- * Փինկ-փոնկ - Արական եւ իգական
- * Լող - Արական եւ իգական
- * Ճատրակ - Արական եւ իգական

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը լաւագոյն ձեւով իրագործելու եւ Հ.Մ.Ը.Մ.ի մասին հայրենի ժողովուրդին աւելի լայն ծանօթութիւն տալու համար, նկատի առնուած է բացման հրապարակային հանդիսութիւն մը, որուն պիտի հրաւիրուի հանրութիւնը:

Բացման հանդիսութեան ընթացքին ողջոյնի խօսքեր պիտի արտասանեն պետական ներկայակացուցիչներ: Տեղի պիտի ունենայ տողանցք՝ մարզիկներու մասնակցութեամբ եւ, աւարտին, երգահանդէս-փառատօն մը Հայաստանէն եւ Սփիւռքէն հրաւիրուած երգիչներու մասնակցութեամբ: Երեւանը պատմական օրեր պիտի ապրի այդ թուականներուն, Հ.Մ.Ը.Մ.ական մեծաթիւ իր զաւակները հիւրընկալելով իր գրկին մէջ:

Մարզախաղերու մասնակից մարզիկներն ու յանձնախումբերու անդամները ծիծեռնակաբերդ այցելութեամբ յարգանքի իրենց տուրքը պիտի մատուցեն Ցեղասպանութեան զոհերու յիշատակին:

Հայրենի հողին վրայ տեղի ունեցող Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերը իրենց աւարտին պիտի հասնին Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսով, պաշտօնական անձնաւորութիւններու, հիւրերու եւ մարզիկներուն ներկայութեամբ: Ճաշկերոյթին պիտի կատարուի մետալներու եւ բաժակներու տուջութիւն:

Մարզիկներ, մարզիչներ, պատասխանատուներ պիտի վերադառնան իրենց երկիրները, ութօրեայ անմոռանալի պահերէ ետք, Հայաստանի հանդէպ իրենց յանձնառութիւնը վերանորոգած եւ կրկին ու կրկին հայրենի հողին վերադառնալու կարօտով լեցուն:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերու կապած նորութիւններուն կարելի է հետեւիլ հետեւեալ կայքէջին ճամբով՝ www.homenetmen.org: Կայքէջը մարզախաղերու ընթացքին ամէնօրեայ դրութեամբ պիտի տեղադրէ մրցումներու արդիւնքներն ու այլ մանրամասնութիւններ: Յաւելեալ մանրամասնութիւններ պիտի հաղորդուին հետագային:


Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





ԹԻՎԻՆ ՆԻՒՆԵՐԸ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 مارزليک مجله رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Ս.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԻՒ. ՏԱՐԻ, 2008, ԹԻՒ 11 (317)

ԽՄԲԱԳԻՐ

Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ

Սեդա Պէշեան

Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Պատրիկ Կիւլպէնկեան

Աբօ Մոսիկեան

Գօգօ Մկրտիչեան

Վահան Համամձեան

Տիրան Շահինեան

Սալբի ճէճէեան

Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

Գրիգորիս Պողարեան,

Ներսէս Արք. Բախտիկեան *,


եւ շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Ձարեհ Զօրէքճեան

Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան

Colour Separation - Photogravure Paklayan

Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ

Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ

«Սեւան» Շէնք, Գ. Յարկ

Հեռ: 01/248043, Fax: 01/260117

E-mail: marzig@homenetmen.org

P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՏՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին

հատավաճառի սակն է 3000 լ.ո.:

Տարեկան բաժանորդագրութեան սակ

ձեղումն է 35000 լ.ո.:

Լիբանանէն դուրս թերթին

բաժանորդագրութիւնը

կը կատարեն Հ.Ս.Ը.Մ.ի Մեկուսի

եւ Շրջանային Վարչութիւնները:

Թերթը ուղղակի Լիբանանէն

կը ստացուի անձնական

բաժանորդագրութեամբ

(Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան

եւ Եւրոպական երկիրներ \$50,

Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



10

Հ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

■ Խմբագրական	2
■ Ակնարկ	3
■ Պատգամ	4
■ Պատմութիւն	8
■ Մասնաձիւղէ Մասնաձիւղ	10



ՔԱՃԻՆՆԵՐ

■ Նուաճում	38
■ Տարբեր Հայեացքով	40

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

«Մարզիկ»-ի այս թիւը մեծ մասամբ նուիրուած է միութեան 90ամեակի տօնակատարութիւններուն, հետեւաբար անկէ դուրս կը մնան շրջաններու ընթացիկ աշխատանքներուն անդրադարձող բազմաթիւ գրութիւններ, որոնք լոյս կը տեսնեն թերթին յառաջիկայ թիւերով:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Հ.Ս.Ը.Մ.ի 90ամեակին առիթով, Հ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.-

- ◆ Տէր եւ տիկ. Հայկ եւ Անահիտ Մարգարեաններ 15,000 գան. տոլար
- ◆ Գարմէն Տէր Կարապետեան 2000 ամ. տոլար



ԶԵՐԿՆԵՐԸ

ԿԱՐԳԱՊԱՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Աշխարհի մեծագոյն ուժը երիտասարդութիւնն է: Բայց երիտասարդութիւնը առանց կարգապահութեան որեւէ արժէք չի ներկայացնէր: Չկայ երիտասարդութիւն՝ առանց կարգապահութեան:

ժողովուրդի մը յոյսը իր երիտասարդութիւնն է, ազգային արժէքներ կրողը եւ ազգին շարունակականութիւնը ապահովողը: Հայութեան համար կասկածէ վեր է այս ճշմարտութիւնը:

Բայց ո՞ր է այդ երիտասարդութիւնը այսօր: Ընդհանրապէս ի՞նչ պատկեր կը ներկայացնէ ան:

Նկատելի է, որ ստուար զանգուած մը հայ երիտասարդութենէն հեռացած է իր ինքնութենէն եւ արմատներէն՝ բռնելով ազգային այլասերման ուղին: Ուրիշներ ինկած են բարոյական այլասերման թակարդին մէջ եւ գերին դարձած են իրենց անձը քայքայող մոլութիւններու: Ոմանք ալ կը թաւալին անորոշութեան եւ անտարբերութեան բաւիղներուն մէջ:

Բարեբախտաբար, կայ նաեւ կարելու համեմատութիւն մը երիտասարդութեան, բոլորուած Հ.Ս.Ը.Ս.ի եւ անոր նման միութիւններու շուրջ, որ հակառակ ժամանակի ու միջավայրի անընդհատ պայմաններուն, ամբօրէն կապուած է իր պատկանելիութեան, հարիր տոկոսով հայ է, իր մտածումներով, զգացումներով եւ ապրումներով:

Հ.Ս.Ը.Ս. արդար ակնկալութիւններ ունի երիտասարդութեան այս հատուածէն յատկապէս, որովհետեւ ան կը ներկայացնէ ազգին կարգապահ երիտասարդութիւնը: Ան՝ որ իր ուժին եւ կարողութիւններուն գիտակցութիւնը ունի, գիտէ մնալ իր կոչումին բարձրութեան վրայ: Ան է իսկական երիտասարդութիւնը, մեր վաղուան յոյսը:

Կարգապահութիւնը կեանքի օրէնքն է, որ կը կանխէ ուժերու աւելորդ վատնումը: Փոքրաթիւ, բայց կարգապահ ուժ

մը յարգանք կը պարտադրէ բոլորին, մինչդեռ անկարգապահութիւնը կը ջլատէ բոլորին կարողութիւնները:

Այսպէս է նաեւ կեանքի բոլոր մարզերուն մէջ: Կարգապահ միութիւն մը, որ հասած է քաղաքացիական դաստիարակութեան բարձրագոյն աստիճանին, դժուար թէ տեղի տայ, որքան ալ մեծ ըլլան իրեն սպառնացող վտանգները:

Նման վտանգներ այսօր կը սպառնան Հ.Ս.Ը.Ս.ին: Տեսակաւոր ու տարբեր կերպարանքներով ներկայացող վրտանգներ են անոնք, որոնց դէմ Հ.Ս.Ը.Ս.ի անպարտելիութիւնը պիտի չփրճուէնք անդամներու իր քանակին մէջ, այլ՝ իր կարգապահ երիտասարդութեան մէջ:

Կարգապահ երիտասարդը ամէն բանէ առաջ պիտի ունենայ իր առաքելութեան գիտակցութիւնը: Ան լաւ պիտի ըմբռնէ, որ Հ.Ս.Ը.Ս.ի ապագան կախում ունի ինքզինք եւ միութիւնը բարձր պահելու իր պատրաստակամութենէն:

Կարգապահ երիտասարդը պիտի ներշնչուի իր միութեան անցեալի մեծ դէմքերէն, պիտի դարբնուի անոնց կեանքին օրինակով ու պիտի ազնուանայ անոնց զոհողութիւններուն մեծամասնութեամբ:

Բոլոր երկինքներու տակ, կարգապահ երիտասարդը բարձր պիտի պահէ իր միութեան արժանապատուութիւնը, հիմնական նպատակ ունենալով միութեան արժէքներուն պահպանումը:

Բնութեան մէջ ամէն բան ուժ է, բայց պէտք է այդ ուժը գործածել գիտնալ:

Կարգապահ երիտասարդը այդ ուժերէն մէկն է, որ կարողութիւնները լաւագոյն ձեւով պիտի օգտագործէ, երբ գիտակից ու հաւատաւոր է:

Ու մանաւանդ, երբ ան կը պատկանի միութեան մը, որ սկառուութեան եւ մարմնամարզի ծամբով իր ազգը պահելու եւ հզօրացնելու մեծ պատասխանատւութիւնը ունի այսօր եւ վա՛ղը:

Օ՛Ն, ՅԱՌԱՋ

(90ԱՄԵԱԿԻ ՀԱՆԳՐՈՒԱՆԷՆ ԵՏՔ)

Գրիգորիս Պողարեան ՊԵՅՐՈՒԹ

Վաղեմի սովորութիւն է տարեց մարդոց կատարուած մեծարանքի արտայայտութիւններուն միացնել յարգալիւր վարուելակերպ եւ նիստ ու կաց: 90ամեայ Հ.Մ.Ը.Մ-ը թէեւ երիտասարդական աւիւնով առլի, սակայն ի տես իր կատարած իրագործումներուն, այնպարզ ծերունիի մը չափ եւ աւելի յարգանք պարտադրող միութիւն մը ըլլալու բոլոր յատկութիւնները ունի այսօր, 90ամեակի իր հանգրուանին: Յարգ կատարուածը իրաւացիօրէն կը պատգամէ «Պատուի ա՛ռ», բայց չի գոհանար այդքանով, այլ նոյնքան պերճախօսութեամբ Հ.Մ.Ը.Մ.ականին կը թերազրէ շարունակել երթը: Իսկ մենք, 90 տարիներու ընդմէջէն եկած պատգամին ականջալուր, կը խոստանանք ամէն բանէ վեր դասել Հ.Մ.Ը.Մ.ի պատիւը եւ անսարով «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի հրամայականին, ամբողջանուէր ծառայութեամբ տալ մեր լաւագոյնը, ազգին հետ, ազգին համար, յանուն հայպահպանումի, հայակերտումի եւ հայրենակերտումի: Կը գիտակցինք թէ մեղմէ պահանջուածն ու ակնկալուածը

դիւրին չէ կատարել, բայց արդեօք ե՛րբ դիւրին եղած է 90 տարիներու վրայ երկարող յաջողութիւններուն իրագործումը: Վստահաբար ո՛չ մէկ ժամանակ, որովհետեւ իւրաքանչիւր նուաճում տքնաջան աշխատանք եւ անձնուրաց նուիրում են թաղարած է: Բարեբախտաբար, այսօր ալ արհամարհելի չէ թիւը այն Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք նախորդ սերունդներու օրինակով եւ նոյնաման հաւատքով Հ.Մ.Ը.Մ.ի ազգանրէր դերակատարութեան հանդէպ պատրաստ են 90ամեայ ջահը նոյնքան բոցավառ եւ լուսասփիւռ փոխանցելու ապագայ սերունդներուն:

Փա՛ռք հիմնադիր հայրերուն, բի՛ւր յարգանք 90 տարիներու անսայթաք երթի ուղեւորներուն, յաջողութեան եւ յարատեւութեան մաղթանքներ պատնէջի վրայ գտնուող իւրաքանչիւր քրոջ եւ եղբօր:

Արդ, 90ամեակի տօնակատարութիւններէն ետք, վերանորոգ երդումով ամրապնդենք մեր 100 հաշուող դիրքերը, եւ հաստատաբայ յառաջանանք Հայաստանի, Զաւախքի եւ Սփիւռքի տարածքին՝ շարունակելու 1918ին սկսուած ազգօգուտ գործը, նորանոր յոբերաններու հեռանկարով: Օ՛ն, յառաջ:



ԱՌՄԵՆԻ ԿԱՄՔ, ԱՌՄԵՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՒՒՐՈՒՄ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱԴՊԻՐ ԵՂՔ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ՄԻՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԼԻԲԱՆԱՆ)

Յորեկնական այս փառաշուք հանդիսությունում Հ.Մ.Ը.Մ.Ի կրկին մեկտեղած է մեզ՝ 90 տարիներու պատմության անդարձ, բայց միշտ ապրող էջերը թերթատելու, յատկատես հայեացքով մեր պատմության ոսկեմատեանէն դասեր քաղելու եւ հաստատ քայլերով շարունակելու դէպի նոր հորիզոն բացուող յաւիտենական երթը, նոյն հաւատքով, միեւնոյն վճռականությամբ եւ ամբողջական նուիրումով:



Յորեկեան՝ բառարանային բացատրությամբ կը նշանակէ կեանքի մը կարեւոր հանգրուանի յիշատակում: Այս պարագային, եթէ պիտի փորձենք կարեւոր հանգրուանի մը մասին խօսիլ, արդար ըլլալու համար պիտի չկարենանք ճիշդ գնահատումը կատարել, որովհետեւ անոր իւրաքանչիւր օրը, մէն մի ժամը ոսկեայ անքակտելի օղակ մըն է՝ նման 90 տարիներու այն օղակներուն, որոնք ազուցուած են իրարու, որպէսզի շղթան հարստանայ նոր յաղթանակներով եւ մեր անդեղեւ երթը կանգ չառնէ երբեք, ո՛չ մէկ վայրկեան:

Հարց կու տամ. արդեօք ի վիճակի՞ ենք 90 տարիներու անվերջ ու անսպառ գործունէութիւններու արժեւորումը կատարել, երբ ան եղած է այնքան մեծ ու հզօր, որ անհնար է որեւէ վերադիր ու չափանիշ գտնել՝ դայն գնահատող ու արժեւորող: Որովհետեւ անոր մեծութիւնը միայն գործին մէջ չէ եղած, այլեւ ու մանաւանդ գործը կատարելու ձեւին մէջ. ի վերջոյ, կեանքը կազմուած է փոքր երեւոյթներէ եւ իրողութիւններէ, որոնց բարեյաջող իրականացումը կախեալ է մեծ արժէքներու յաջողութենէն:

Երբ Շաւարշ Քրիսեաններ, Գրիգոր Յակոբեաններ եւ Յովհաննէս Հինդլեաններ այս հզօր միութեան հիմը դրին, անոնք առաջնահերթ նկատեցին սերունդներու հոգիի, մտքի եւ մարմնի կրթութիւնը, որովհետեւ անոնք կը հաւատային, որ սերունդներ պատրաստելու գործը աւելի կ'արժէ, քան կառուցներ ստեղծելու ճիգը: Եւ իրարմէ անբաժան այս երեք յատկանիշներուն մէջ անոնք ամրապնդեցին ու մարմնաւորեցին մարդակերտումի սրբազնագոյն նպատակը:

Նպատակներու իրականացման ի խնդիր անոնք ներշնչեցին եւ ի գործ դրին անսահման ծառայութեան ոգի, բոլոր հաճոյքներուն ծայրը՝ ճանճրոյթը տեսան, իսկ բոլոր գոհողութիւններու ծայրը՝ գոհունակութիւնը, եւ այս իսկ պատճառով առաքինութիւններուն հիմը նկատեցին խոնարհութիւնը:

Այս բոլորին ապացոյցը նոյնինքն իրենց կեանքն է՝ կեանքի կենդանի օրինակը, այն դասն ու նուիրումը, պիտի ըստինք համահայկական պողպատեայ ոգին, որ ամէն բանէ առաջ եւ վերջ իր մտահոգութեան առանցքը դարձուց որբանոցի մէջ ապրող հայ մանուկն ու երեխան:

Որբանոցէն ծնունդ առած, որբանոցները ծաղկեցուցած այս հզօր միութիւնը աշխարհի չորս տարածքին այսօր կը գործէ 100 մասնաճիւղերով եւ արար աշխարհին կը գոչէ. «Ո՛չ հուր, ո՛չ թուր կրնան սանձել ու կասեցնել մեր ժողովուրդին արդար դատին հետապնդումն ու իրականացումը»:

Ի վերջոյ, դուր չէ, որ տեսլապաշտ ժողովուրդները մարդկային կատարելագոյն յաջողութիւնը կը նկատեն նպատակին յաղթանակը, որ կեանքը կը վերածէ նպատակներու հետապնդման յարատեւ արշաւի, յաղթերթի:

Մեր հիմնադիրները մեզի կտակեցին նաեւ, որ բառին ազնւագոյն առումով, գլխադիր ու մեծ մարդ ըլլալու համար պէտք է ըլլալ վեհանձն ծրագիրներու մէջ, աղնիւ՝ գործի դաշտին վրայ եւ համեստ՝ յաջողութիւններու ատեն:

Լիբանանի շրջանը, որպէս հաւատարիմ զաւակը իր հիմնադիրներու շառաւիղին, գործեց առաւելագոյն ճիգով. ան անշեղ ու հաւատարիմ մնաց անոնց ոսկելոյս կտակին՝

Ունեցաւ փաղանգ մը հաւատաւորներ, որոնք արժանի դարձան մեծ մարդ կոչուելու:

Ունեցաւ փաղանգ մը ծառայողներ, որոնք գերադասեցին միութեան շահը անձնականէն:

Ունեցաւ փաղանգ մը անշահախնդիրներ, որոնք իրենց բոլոր ուժերն ու կարողութիւնները ի սպաս դրին Հ.Մ.Ը.Մ.Ի գոհանդանին եւ այս միութիւնը միշտ երիտասարդ պահեցին:

Անսկիզբ ու անժամանց նոր 90ամեակներու սեմին, այսօր աւելի քան երբեք, մեզմէ կ'ակնկալուի. -

Ա) Առաւել կամք. այսօր ամէնուրեք կը խօսուի տեսակ-տեսակ դժուարութիւններու մասին: Փամանակները երբեք տարբեր չեն եղած, միշտ ալ դժուարութիւններ եղեր են, տակաւին գայլիկ՝ մենք այս դասը վաղուց սորված ենք Հ.Մ.Ը.-Մ.ի մեծ դպրոցին մէջ, ահա թէ ինչո՞ւ քաջ գիտենք նաեւ, որ միայն դժուարութիւնները յաղթահարելով մարդ կը կերտէ իր նկարագիրը: Մեր պատմութիւնը վկայ. Յեղասպանութեանէն վերապրած աղգ ենք, ալ ի՛նչ բացատրութիւն: Մեր կոչն է, որ մեր նորահաս սերունդը, որպէս արժանաւոր ժառանգորդը իր պայերուն, ամրապնդէ ու զօրացնէ իր կամքը քաջաբար ծառայելու եւ պայքարելու համար իր երթը արգելակել նկրտող դժուարութեանց ու մարտահրաւէրներուն դէմ:

Բ) Առաւել ստեղծագործութիւն, որովհետեւ առաջին հերթին մեղմէ կը հեռացնէ երեք բան՝ ձանձրոյթը, ախտը եւ աղքատութիւնը: Մարդ ստեղծուած է ստեղծագործելու համար. պէտք է երբեք անգործ նստի. ստեղծագործելու կամքն ու ոգին մարդուն ամէն մէկ քայլին կ'արթնցնեն անոր ներսիդին քնացող դօրութիւն մը եւ արմատախիլ կ'ընեն բոլոր մոլութիւնները: Մեր ստեղծագործութիւններով պիտի հարստացրնենք մեր անմիջական շրջապատը եւ պիտի գերհզօրացնենք մեր միութիւնը:

Գ) Առաւել նուիրում. անշահատէր նուիրումին մէջ անձնասիրութիւնն ու նախանձը չեն կրնան ապրիլ: Երբ

մարդ իր կեանքին մէջ բաժնէ «Այլ կը բաւէ», այդ վայրկեանէն սկսեալ իր գոյութիւնը կը դառնայ անարժէք ու անիմաստ: Նուիրումը ո՛չ չափ ունի, ո՛չ ալ կշիռք: Միտքը կը հարստանայ իր ստացածով, սիրտը՝ իր տուածով: Այն ինչ որ կը պահենք, պիտի կորսուի, իսկ երբ շարունակ եւ անհաշիւ տանք՝ յաւերժ պիտի ապրի:

Այս առիթով, յանուն Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, կը շնորհակարտենք այսօրուան մեր շքանշանակիր քոյրերն ու եղբայրները, որոնք կը պատկանին այն սերունդին, որուն մեծ ու պղտիկ բոլոր անդամները ծառայեցին՝ քան հրամայեցին, պաշտօնատար եղան՝ քան պաշտօնատէր:


Հետեւաբար, եկէ՛ք, յանձնառու գիտակցութեամբ վերանորոգենք մեր ուխտը շարունակելու նոր 90ամեակներու բացւող մեր Արարատագնաց ու յաղթապանծ երթը, մեր վեհատեսիլ ու վեհածին նշանաբանով՝ «Բարձրացիր-բարձրացուր»ով:

Ուրեմն՝ «Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ»ու արժանաւոր ժառանգորդներ:

Յառա՛ջ անսասան,

Յառա՛ջ անդեղեւ,

Դէպի նոր յաղթանակներ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home,
away from home...*

Reservations **Yerevan**
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

ՄԻՇՏ ԿԱՅՏԱՌ, ՄԻՇՏ ԱՐԻ ԵՒ ՄԱՆԱԲԱՆԴ ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ

(ԵՂԲ. ԶԱՐԵՀ ՏԵՐՎԻՇԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝
Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ)

90 ամեակ: Գրեթէ դար մը անցած է իր հիմնադրութենէն, որ կը գուգադիպէր 1918ին. Հայաստանի Հանրապետութեան անկախացման: Եւ ի՛նչ բախտորոշ ղուգադիպութիւն: Եղեռն, միլիոնաւոր նահատակներ, տեղահան եւ ցիր ու ցան եղած հայեր, եւ ահա, երեք տարիներ ետք, Պոլսոյ մէջ ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ.ը առաջին օրէն իսկ օգնութեան կը հասնէր Յեղասպանութենէն ճողոպրած որբերուն, հաւաքելով եւ տէր կանգնելով անոնց:



նախ ընտանիքը, ապա՝ դպրոցը: Յեղասպանութեան յաջորդող անմիջական տարիներուն, երբ հայ ծնողներ մահուան, հիւանդութեանց եւ անօթութեան դէմ կը պայքարէին, անդին՝ աշակերտներ նախակրթարանները կիսատ թողած կը նետուէին գործի ասպարէզ, նեցուկ կանգնելու համար իրենց ծնողներուն, երբ այդ օրերուն, անոնք ամէնէն աւելի կարիքն ու պահանջը ունէին դաստիարակութեան:

Այդ օրերուն, 6 Յունիս 1920 թուակիր պաշտօնական նամակով, նորաստեղծ Հայաստանի կառավարութեան կրթական նախարար Նիկոլ Աղբալեան Հայաստանի Հանրապետութեան Պոլսոյ ներկայացուցիչին կ'ըսէր. «Պատիւ ունիմ տեղեկացնելու, որ նախարարութեանս ծրագիրն է Հայաստանի մէջ ամենայայն չափով տարածել սկստութիւնը, բայց դրան արգելք է հանդիսանում հմուտ մասնագէտների բացակայութիւնը: Ուստի, եթէ տակաւին չէք դրկած մարզիկները, բարեհաճեցէք առանց յապաղելու կատարել մեր խնդրանքը, ժամանակը անցնում է ու կարիքը ահագին է»:

Եւ ահա Հ.Մ.Ը.Մ.ը հոն էր: Հոն էր 1915ի ջարդերէն վերապրած սփռուքեան բոլոր գաղթավայրերուն մէջ, ինչպէս՝ Տէր Զօր, Ռաքթա, Արարունար, Ռաս Իւլ Այն, Ճարապլուս, Գամրիլի, Հասիչէ, Աղէզ, Թէլ Ապիատ, Գամասկոս, Լաթաքիա, Հալէպ, Պէյրութ, Յորդանան, Եգիպտոս, Յունաստան եւ կը դառնար ներկայութիւն: Կը կաղմակերպէր եւ կը կաղմակերպուէր: Կը համախմբէր Յեղասպանութիւն, ջարդ եւ տարագրութիւն տեսած որբացած պատանիներն ու մանուկները, որոնք օտարութեան մէջ շրմած՝ անորոշ ներկայ մը կ'ապրէին եւ որոնց ապագան մուծ էր եւ մանաւանդ՝ միջավայրին յարմարելու անբացատրելի հոգեվիճակ մը կ'ապրէին:

Բնականաբար, Հ.Մ.Ը.Մ. ընթացք կու տար այդ նամակին եւ անմիջապէս Հայաստան կ'ուղարկէր երեք կարող մարզիկներ. Վահան Չերազ, Տիգրան Խոյեան եւ Օննիկ Եղամաճեան, որոնք կը լծուէին ժրջան աշխատանքի: Բայց, աւա՛ղ, Հայաստանի խորհրդայնացումով Հ.Մ.Ը.Մ.ը ակամայ կը պարտաւորուէր լքելու իր հայրենիքը:

Այսպիսի պայմաններու մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան դիմաց կը բացուէին յայնատարած խոպան դաշտեր, այդ օրերու հայ բեկորներու վերապահուած ճակատագիրը բարեփոխելու, մարդանոցի եւ սկստութեան ճամբով դաստիարակելու այդ սերունդին հոգին եւ մանաւանդ՝ ոգին, ղորացնելով անոնց նկարագիրը, ապրելու, գոյատեւելու եւ յղթելու կամբքը, քաջալերելով եւ պարտադրելով հայախօսութիւնը իր շարքերուն մէջ:

Այո՛, Հ.Մ.Ը.Մ. առժամաբար լքեց հայրենիքը, բայց երբեք չմոռցաւ դայն: Լքեց հայրենիքը, բայց չմոռցաւ իր աղգութիւնը, չմոռցաւ իր աղգը, չմոռցաւ իր նախնիքը, չմոռցաւ իր եկեղեցին:

Հայրենիք եւ աղգութիւն միաձուլուած՝ եղան իր գաղափարաբանութեան գլխաւոր երկու կռուանները եւ՝ «Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ՝ Վեց դարու անմոռ վրէժի գրահներ» երգելով եւ տողանցելով, անոնք արմատներ նետեցին եւ ճիւղաւորուեցան նոր յառաջացած գաղթօճախներու մէջ:

Հայրենիք եւ աղգութիւն միաձուլուած՝ եղան իր գաղափարաբանութեան գլխաւոր երկու կռուանները եւ՝ «Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ՝ Վեց դարու անմոռ վրէժի գրահներ» երգելով եւ տողանցելով, անոնք արմատներ նետեցին եւ ճիւղաւորուեցան նոր յառաջացած գաղթօճախներու մէջ:

Հոգիէն աւելի ոգին է, որ պէտք է դրոշմուի իւրաքանչիւր երիտասարդի ու պարմանուհիի մօտ, հայու անխոնջ ոգին,

հայու աղբակային եւ հայրենասիրական ոգին, որպէսզի կարենանք տոկայ, յաղթել եւ պահպանել մեր գոյութիւնը Սփիւռքի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը մարդական միութիւն ըլլալէ աւելի գաղափարական միութիւն մըն է, իսկ մարմնակրթանքը միջոց՝ հայ պատանիէն ու պարմանուհիէն պատրաստելու վաղուան տիրար հայ մարդը:

Հ.Մ.Ը.Մ.ի ոգին եւ իր սքանչելի, խորիմաստ ու իւրայատուկ նշանաբանը՝ «Բարձրացիր՝ բարձրացուր»ը իր շուրջ կը համախմբէր համեստ ուսման տէրը եւ վկայեալը, աղքատն ու հարուստը, արհեստաւորն ու բժիշկը, այլ խօսքով՝ թիւը, որակը եւ ուժը: Այդ ոգին էր, որ կը շողկապէր հայորդիները եւ կը բերէր գիրենք կողք-կողքի, օրէ օր բաղմապատկուելով եւ վերածուելով հսկայ միաւորի մը, մեծ ընտանիքի եւ անխորտակելի պատնէշի մը: Հ.Մ.Ը.Մ.ի ոգին հայու հարադատ, աննկուն ոգին էր, որ 90 տարիներ շարունակ մեր նորահաս սերունդներուն մօտ հայակերտման եւ հայապահպանման հրաշքներ կը գործէր:

Երջանկայիշատակ Զարեհ Ա. Կաթողիկոս Մեծն Տանն Կիլիկիոյ, Հ.Մ.Ը.Մ.ի ձօնամակի առթիւ այսպէս կ'արտայայտուէր. «Հայ աղբի կեանքին մէջ պատահած «հրաշք»ներէն մէկն է, անտարակոյս, կաղմութիւնն ու դարգացումը Հ.Մ.Ը.Մ.ին, որպէս կոթող անոր անցեալի փառքին ու գրգիռ՝ ապագայի առաւել փառաւոր գործունէութեան»:

Այո՛, 20րդ դարու հրաշքներէն մէկն է Հ.Մ.Ը.Մ.ը: 90 տարիներու ընթացքին բաղմաթիւ հայկական միութիւններ ծնան, գործեցին հայութեան մէջ, փորձեցին ապրիլ, սակայն անոնցմէ ոչ ոք կարողացաւ տոկայ: Հ.Մ.Ը.Մ.ը այսօր կայ աւելի քան կենսունակ: Եթէ յիսնամեակ մը առաջ ան կը հաշուէր 25 մասնաճիւղեր, 6000 մարդիկներով եւ սկստական շարքերով, այսօր Հ.Մ.Ը.Մ.ը ունի 100 մասնաճիւղեր եւ 25 հազարէ աւելի մարդիկներ եւ սկստական Հայաստանի կողքին՝ աշխարհի հինգ ցամաքամասերու տարբեր երկիրներուն եւ բաղմաղան քաղաքներուն մէջ:

Եւ այս բոլորը մենք կը պարտինք Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան եւ մանաւանդ այն իրողութեան, որ Հ.Մ.Ը.Մ.ը կ'ապրի հայ ժողովուրդի զաւակներուն համար եւ միշտ քայլ կը պահէ անոր հետ, անոր նեղ ու լաւ օրերուն, կը գործէ միշտ հպարտ, կը մնայ միշտ կենսունակ եւ միշտ պատրաստ՝ համախմբելու գիրենք Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի վեհ դրօշներու հովանիին տակ, կերտելով առողջ եւ մաքուր նկարագրի տէր անհատներ:

Հ.Մ.Ը.Մ.ը 90 տարիներ շարունակ եղաւ նաեւ պահպանող մեր Եռագոյն դրօշին, եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին հետ, իր կուռ տողանցքներով, ոգեւորեց ամբողջները, վերակենդանացուց մեր անցեալը եւ տուաւ յոյս մեր տարագիր ու գաղթական ժողովուրդի խաւերուն: Այսօր, հրաշքի մը նման Եռագոյնը կը ծածանի վերանկախացած Հայաստանի երկիրներն տակ եւ Հ.Մ.Ը.Մ.ը վերստին հոն է, Հայաստանի դանաղան շրջանները, շարունակելու իր կիսատ ձգած առաքելութիւնը:

Տարբեր երկիրներ, տարբեր մշակոյթներ, տարբեր բարքեր եւ սովորոյթներ մեր գաղութներէն ներս: Մեր օրերուն, երբ գաղթաշխարհի միջավայրերը եւ հաճոյքները աւելի աղ-

ղեցիկ, քաշողական, հմայիչ եւ ուժեղ են, Հ.Մ.Ը.Մ.ի պարտականութիւնները դժուարացած են եւ քառապատկուած՝ քայլ պահելու օրուան պահանջներուն եւ մեր երիտասարդութիւնը պահելու մեր շուրջը, մեր կեդրոններուն, մեր ակումբներուն եւ մեր եկեղեցւոյ շուրջ:

Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի տարածքին հայ նոր սերունդին մօտ դօրացուց հաւատքի, յոյսի, ապրելու եւ մանաւանդ հայ մնալու գիտակցութիւնը: Աւելին, Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի հայ գաղութներուն մօտ եղաւ ու կը շարունակէ մնալ ջահակիրն ու ջատագովը աղբի եւ հայ եկեղեցւոյ գոյութեան, որուն պայծառութեան եւ էութեան համար պայքարեցաւ միշտ:

Անմասն ու շատ տպաւորիչ է Հ.Մ.Ը.Մ.ի սկստութիւն խոստովութիւնը.՝

«Կը խոստանամ ըլլալ հաւատարիմ Աստուծոյ եւ ժառանգել Ազգիս ու Հայրենիքս, միշտ օգնել ուրիշին եւ գործել իբրեւ պարտականութեան գիտակից արի եւ վեհամօծ մարդ»:

Կա՞յ աւելի խորիմաստ եւ իմաստալից խոստովութիւն: Աստուած եւ Հայրենիք: Ահաւասիկ գլխաւոր խթանը իր շարքերու խտացման եւ բիւրեղացման:

Հ.Մ.Ը.Մ.ը Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ, «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» ձգտումով, ջանաց ըլլալ հայ պատանիին նկարագիրը կերտող, հոգին աղնուացնող, ոգին ամբարպետող հայկական մեծագոյն եթէ ոչ՝ համաշխարհային միութիւնը: Ան նաեւ դարձաւ հայակերտման եւ հայապահպանման օրրանը, 90 տարիներու ընթացքին իր շուրջը համախմբելով տասնեակ հազարաւոր հայորդիներ, կաղմեց անդամներու հսկայ ցանց մը, որոնք գիրար «քոյր» եւ «եղբայր» կոչելով կաղմեցին մեծ ընտանիք մը, պայքարելու համար անհնարին դժուարութեանց դէմ, առանց պետական միջոցներու կամ օժանդակութեանց:

90 տարեկան Հ.Մ.Ը.Մ.ը դեռ եւս կը շարունակէ իր գոյութիւնը՝ մնալով պատնէշի վրայ, միշտ առոյգ, միշտ կայտառ, միշտ արի եւ մանաւանդ միշտ երիտասարդ, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը նաեւ մեր ժողովուրդն է, երիտասարդ եւ առոյգ:

Փա՛ռք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր անդամներուն: Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք անսակարկ նուիրումով իրենց աջակցութիւնը բերին՝ ծառայելով Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր միջոցով հայութեան եւ վարձքը կատար նաեւ անոնց, որոնք տակաւին բեռ մը շալկած, դեր մը ստանձնած են Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան ճամբուն վրայ:

Խօսքս կը փակեմ երջանկայիշատակ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հ.Մ.Ը.Մ.ին ուղղած խօսքով, ուր ան կ'ըսէր.՝

«Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը ինձի համար տարագ չեն՝ աչքերդ լեցնող, այլ՝ դպրոց են: Արդարեւ, դպրոց մըն է Հ.Մ.Ը.Մ.ը, որուն մէջ կը սորվինք այն մեծագոյն, գերազանց դասը՝ որ ներդաշնակեալ ուժին մէջ է իրական կեանքը:

«Ծնողներ, տուէք ձեր զաւակները, յանձնեցէ՛ք Հ.Մ.Ը.Մ.ին, որովհետեւ անոնք հոն պիտի սորվին այն, ինչ որ չեն տեսներ տունը, դպրոցը:

«Յեռու ենք մեր հայրենի հողին: Հայրենիքի գաղափարով ներշնչեցնք նորահաս սերունդները, նպատակ ունեցող ասպետական ոգիով»:

ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՉԱՔՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



տագային լեհ Պոժորովսքի: Անթիլիասի որբանոցի սկաուտները եւ տղոց չափական մարդանջները, նուազախումբի ընկերակցութեամբ,- «Ձէյթունցիներ», «Լուսին չկար», «Տալուրիկ» երգերու համաչափութեամբ, հայու սրտերը կը բրգացնէին, հոն հաւաքուող հայ հիւրերը (Անթիլիասը մօտ ըլլալով Պէյրութին՝ աւելի մեծ թիւով ներկայ կ'ըլլային) հոգեկան մեծ բաւարարութիւն կը ստանային:

Ողիմպիական այս խաղերն ու մարդանջները լուկ ժիպէյլի, Անթիլիասի, սկիզբները Նահր Իպրահիմի ու Մամըլթէյնի յատուկ չէին, այլ դանոնք ըստ պատշաճի կը կիրակուէին նաեւ աղջկանց որբանոցներէն ներս, Սայտայի ծովափնեայ - Սի Սայտա Սարազլի - Հիլ Թափ- որբանոցներուն, ինչպէս նաեւ՝ ձիւնիի, Ղազիրի աղջկանց որբանոցներուն մէջ: Վաստահօրէն մարմնամարդ կը կիրակուէր նաեւ Աղգային Սիսուան-Քէյէկեան եւ հայ կաթողիկէ որբանոցներուն մէջ: Մարդանջներէն դատ, բոլոր որբանոցներն ալ, մանչերու եւ աղջիկներու, մանաւանդ ծովափնեայ որբանոցները, ծովային լողանքի պարտադիր ժամեր ունէին:

Մարմնակրթանքի բոլոր ճիւղերուն մէջ, անկասկած, ֆուլթպոլը իր յատուկ տեղը ունէր որբանոցներուն մէջ, ուր առանձին ֆուլթպոլի խումբերէն դատ կային նաեւ դասարանային խումբերը՝ երբեմն մրցելու նոյն դասարանի տղոց հետ եւ ապա՝ դասարանները իրարու դէմ:

Ախոյեան խումբերը կը կաղմուէին միջ-դասարանային մրցումներու արդիւնքէն: Ախոյեան խումբերու կարգին կային նաեւ երկրորդական խումբեր:

Տղոց որբանոցներէն ներս, ֆուլթպոլը իր անառարկելի պատուոյ տեղը ունէր: Կաշեպատ ֆուլթպոլը հաղուազիւտ երեւոյթ էր: Պարզ լաստիկին վրայ կը քաշուէր տոկուն լաթ, գլխաւորաբար խաքի կտոր, ապա կ'ուռեցուէր ու խաղադաշտ կ'իջեցուէր: Բոպիկ ոտքով հարուածելու համար այս ձեւի գնդակները շատ յարմար էին: Տարուան գրեթէ մեծ մասը տղաքը բոպիկ կ'անցընէին արդէն: Ամէն տղայ գնդակ չէր ունենար: Գնդակ ունենալը առանձնաշնորհում մըն էր եւ գանձ: Այսուամենայնիւ, ամէն տղայ գնդակ կը խաղար: Գնդակ ունեցողները խաղընկեր կը փնտուէին եւ այդ ընկերները միշտ պատրաստ էին: Գնդակի խաղի տպաւորութեան տակ, ժիպէյլի «ՏուՆ» խմորատիպ ամսագրին մէջ, ժիպէյլի որբ «բանաստեղծ» մը, ֆուլթպոլէն ներշնչուած քերթած է... հետեւեալը, «Լուսին» խորագրին տակ.-

Որբանոցին մէջ ժիպէյլի,
Ֆուլթպոլներ կան հիանալի,
Քաշուած կտաւ անոնց վրայ,
Որով ամէն մարդ կը խաղայ:
Երբեմն օդին մէջ զարնելով,

Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)
ԱՆՏԻՊ, 2. ՄԱՍ

Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցի տղոց որբանոցներէն Անթիլիասը անմասն պիտի չմնար, անշուշտ, իր անմիջական մասնակցութիւնը բերելու մարմնակրթանքի բոլոր մարզերուն: Որբանոցի տնօրէն, գինուորական պրն. ձոն Նաթանի կարգադրութեամբ պիտի կազմուէր իր ժամանակի Լիբանանի լաւագոյն նուազախումբը, դեկավարութեամբ Գրիգոր Յակոբեանի: Իրբեւ մարզիչ պիտի հրահրուէր Եգնիկ Քէշիշեան, ապա՝ ժիրալը Պալեան ու հե-

Երբեմն մէկ կամ զոյգ կոլով,
Այսպէս տղաք կը խաղային,
Սէջ ընդարձակ մեր հարթ բակին:
Այսպէս օր մը կը խաղային,
Իրարու դէմ կեցած կրկին,
Կը ջանային լաւ զարնելու,
Դիմացիներն դրկել հեռու:
Իր ոտքերը ուժգին լարած,
Ֆուխալուխտ մը կեցաւ յանկարծ,
Հարուած մըն էր տուաւ ուժգին,
Իսկոյն յանձնեց զայն եթերին:

Եթերն առաւ ու տարաւ,
Ճիշդ երկնքի վրան դրաւ,
Ուր կը քայլէ ան շարունակ
Մեր ժիպէյլի ճերմակ գնդակ:
Նայէ՛ յաճախ ան կ'երթայ,
Մութ կապուտակ երկնի վրայ,
Այն օրէն մարդիկ կոչեցի՜ն...
Մեր գնդակը եւ ըսին «Լուսին»:

«Տուն», Յունիս 1925:

Լիբանանի հայ գաղութի մարդական կեանքին ծնունդը տեղի ունեցաւ որբանոցներու մէջ. ողիմպիական խաղեր, ֆուլթպոլ ու տողանցքներ: Ասոնց կարգին նաեւ ձեռարուեստ ու արուեստ. «Մասնաւորապէս յիշատակելի են հայկական որբանոցի աղջկանց ձեռագործները եւ տղայոց նկարները, Ժիպէյլի որբանոցին Փանֆարը, Նահր Իպրահիմի եւ Մամբլթէյնի որբանոցներուն զինուորական տողանցքները...»¹:

Շատ չանցած, հետզհետէ, Հալէպի, Պէյրութի եւ Դամասկոսի հայկական գաղութները ձեւ ու մարմին պիտի ստանային ու հոն պիտի փոխադրուէր գնդակ ու գնդախաղ, ողիմպիական խաղեր ու տողանցք, որովհետեւ 1934ի սկզբնական ամիսներուն Պէյրութի մէջ հիմը կը դրուէր հայ մարմնակրթանքի դրօշակակիր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, Պոլսէն գաղթած քանի մը անձնուէր երիտասարդներու կողմէ:

Հալէպի եւ Պէյրութի հայկական հոծ գաղութներուն հետ երրորդ տեղը կը գրաւէ Դամասկոսը:

Դամասկոսի հայ գաղութին պատմութիւնը, մեր պատմութեան անցեալ դարերուն խառնուած, կը հասնի մինչեւ հինգերորդ դար: Այդ դարերէն եկող գաղութը եղած է ափ մը, որ ապրած է Ս. Մարգրիս վանքին ու Հոգետան շուրջ, ապրած է Հայաստանէն Երուսաղէմ ուխտի ճամբուն վրայ: Երկար է Դամասկոսի հայ գաղութին պատմութիւնը, սակայն ան բոլորովին պիտի փոխուէր Համաշխարհային Առաջին պատերազմին «մեր աղբին պարտադրուած բռնադատեալ աքսորին հետեւանքով»:

«Ընդհ. պատերազմին,-1915- Դամասկոս եղած է մեծ գաղթականայն մը Հայաստանի եւ Կիլիկիոյ ամէն կողմերէն եկած հայերու: Ըստ արձանագրութեանց, նոյն թուականին գաղթականութեան համագումար թիւը եղած է 30.000է աւելի: Զինադադարին, գաղթականները կը մեկնին Կիլիկիա-1919: Կիլիկիան ֆրանսացիներուն կողմէ պարպուելուն հետեւանքով-1921-1922- Սուրիոյ ուրիշ վայրերուն նման, Դամասկոս



1949. Հ.Ս.Շ.Մ.ի Դամասկոսի պասքեթպոլի աղջկանց խումբը:

եւս անմասն չի մնար ընդունելու նոր գաղթականներ եւ կ'ունենայ 13.000 հայ տարագիր ժողովուրդ...»²:

Դամասկոսի այս հոծ գաղութը իր աղբային վարժարանին ու աղբային կաղմակերպութիւններուն կողքին պիտի ունենար նաեւ մարմնակրթանքի հետեւողներու խմբաւորում մը: Արդարեւ, 1922ին, հոն գոյութեան կու գայ Կարապետ Գաֆեանի նախաձեռնութեամբ «Վահագն» Պատանեկան Միութիւնը: Միութեան հիմնադիր վարիչին մեկնումէն ետք, այդ դերը կը ստանձնէ Տիգրան Գալբաճեան, որուն օրերուն Պատանեկան Միութեան ծրագրին մաս կը կաղմէ նաեւ մարմնակրթանքը:

1924ին կաղմուած է Պատանեկան Միութեան առաջին ֆուլթպոլի խումբը՝ «Վահագն» անունով:

Հետզհետէ կը կաղմուին «Շանթ», «Արծիւ», «Մասիս» խումբերը: Պատանեկան Միութեան կաղմած այս խումբերէն դատ, կաղուած է նաեւ Դամասկոսի լաղարիստներու վարժարանը յաճախող հայ աշակերտներու «Ծիլ» ֆուլթպոլի խումբը:

Այս խումբերը, միութեան այլ անդամներու հետ, ֆուլթպոլէն դատ կը կիրարկեն մարմնակրթանքի այլ ճիւղեր ու 1924ին միասնաբար կը կաղմակերպեն առաջին ողիմպիականը ու կը ստեղծեն մարդական կեանքի շուրջ լայն հետաքրքրութիւն հայ թէ օտար հասարակութեան մէջ:

Հալէպ աւելի կուռաններ ունէր արագօրէն կաղմակերպելու մարմնակրթանքը ու դայն դարձնելու սեփականութիւնը հայ եւ օտար հասարակութեան:

(Շար. 6)

(1) «Սուրիահայ Տարեցոյց», էջ 53, Ա. հատոր:
(2) «Սուրիահայ Տարեցոյց», Հ. Պալեան, էջ 222:



ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ՝ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Լուսանկարները՝ «Սթիստիս Աշևակ»ի:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

- ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԻՆ 25 ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐ:
- ՅԵՏ ՄԱՀՈՒ «ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՏԱԿ ԱՏԵՆԱՊԵՏ՝ ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ:
- ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ «ԱՐԺԱՆԵԱՑ» ԵՒ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՊԱՏՐԻԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ԵՒ ՑՈԼԱԿ ԹԻԻԹԷԼԵԱՆ:
- ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՎ «ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ԿԸ ՍՏԱՆԱՆ ՉՈՐՍ ԵՂԲԱՅՐՆԵՐ, ԻՍԿ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆ՝ 18 ՔՈՅՐԵՐ ԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ:

14

Նոյեմբեր 2008ին, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքը փառաշուք հանդիսութեամբ մը նշեց միութեան հիմնադրութեան 90ամեակը: Հանդիսութիւնը վայելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին հովանաւորութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախագահութիւնը:

Հանդիսութիւնը տեղի ունեցաւ «Էմիլ Լահուտ» մշակութային համալիրի սրահին մէջ, Տըպպայէ, կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, ներկայութեամբ՝ Արամ Ա. Կաթողիկոսին, լիբանանահայ երեք յարանուանութիւններու հոգեւոր պետերուն, ներկայ եւ նախկին պետական երեսփոխաններու, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու ներկայ եւ նախկին անդամներու, Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի նախագահին, սկաուտական եւ մարզական միութիւններու, կազմակերպութիւններու եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներու եւ ժողովրդային հոծ թիւով բազմութեան մը: Բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներով:

ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԸ ՈՂՋՈՑՆԻ ԽՕՍԻԸ

Հանդիսութեան սկիզբը, եղբ. Նազօ



Հայրապետական իր պառօմամը կը փոխանցէ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը:

Հայրիպեան ընթերցեց միութեան 90ամեակին առիթով Լիբանանի նախագահ զօր. Միշել Սլէյմանի ողջոյնի խօսքը: Իր խօսքին մէջ նախագահ Սլէյման կը շնորհակալուի միութիւնը եւ կը մաղթէր անսպառ ծառայութիւն, ի խնդիր Լիբանանի մարզական կեանքին վերելքին, միութեան անդամներուն միջեւ մարզական ոգիի, առողջ եւ օրինաւոր մրցակցութեան ամրապնդման, յուսալով որ այդ բոլորը կը հարստացնեն Հ.Մ.Ը.Մ-ական երիտասարդութեան կարողութիւնները եւ զանոնք կ'օժտեն այնպիսի յատկութիւններով, որոնք բարիք կը բերեն ընկերութեան (ողջոյնի գիրը տեսնել առանձին):

90ԱՄԵԱԿԻ ՏԵՍԵՐԻՉԸ

Այս առիթով ներկաները դիտեցին յորեքեք միութեան 90ամեայ պատմութիւնը ծանօթացնող տեսերիք մը, որ կը ներկայացնէր անոր հիմնադրութեան եւ գործունէութեան պայմանները՝ մինչեւ մեր օրերը: Տեսերիքին մէջ տեղ գտած էին վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ-ականներու վկայութիւններ:

Հ.Մ.Ը.Մ-Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԻԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան խօսքը արաբերէնով արտասանեց ատենապետ եղբ. Մովսէս Պարսումեան Ան ըսաւ, որ նախորդ դարուն հայութեան դէմ գործադրուած անմարդկային ոճիրներէն ետք մէկը չէր կրնար երեւակայել, որ հայ ժողովուրդը կրնայ վերըստին զարթօնք ապրիլ ու պահանջել իր արդար իրաւունքները: Եղբ. Պարսումեան նշեց, որ հայութիւնը մահուան գազափարը մերժելով, վերահաստատեց ապրելու իր կամքը եւ ստեղծեց ընկերային, մշակութային ու մարզական կառույցներ՝ հաւաքաբար պահպանելով հայ ժողովուրդի ազգային սկզբունքները:

Հ.Մ.Ը.Մ-ի ստեղծման կարեւորութեան, մասին խօսելով, եղբայրը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը աշխարհագրական սահմանափակում չունի, որովհետեւ ան



«Շառայութեան» շքանշանի արժանացած եղբայրներ:



Լիբանանի նախագահին ողջոյնի խօսքը կ'ընթերցէ եղբ. Նազո Յապիպեան: Խօսքեր կ'արտասանեն եղբ. Մովսէս Պարսումեան եւ Չէյտ Խիամէ:

կը գործէ հոն, ուր հայութիւնը գոյութիւն ունի:

Այնուհետեւ, միութեան Լիբանանի գործունէութիւնը ներկայացնելով, երբ. Պարսումեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը այսօր ունի աւելի քան երեք հազար անդամներ, որոնք սկստական ու մարզական բնագաւառներու մէջ կը կատարեն իրենց աշխատանքները: Ան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ականները լիբանանեան, արաբական ու միջազգային բազմաթիւ մրցաշարքերու ընթացքին բարձր պահած են միութեան եւ Լիբանանի անունը:

Եղբ. Պարսումեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը ընկերութեան ծառայելն է:

յին է: Ան իր գործունէութեամբ երիտասարդութիւնը հեռու կը պահէ յոռի բարքերէ, կը պահպանէ կենսոլորտը եւ կը ստեղծէ համագործակցութեան ոգի:

Իր խօսքին աւարտին, եղբ. Պարսումեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք տարիներու ընթացքին նիւթապէս ու բարոյապէս թիկունք կանգնեցան Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Լիբանանի երիտասարդութեան եւ

մարմնակրթութեան նախարար Թալալ Արսլանի խօսքը փոխանցեց նախարարութեան տնօրէն Չէյտ Խիամէ: Ան նշեց, որ մէկ տարեկանէն մինչեւ 91 տարեկան մարդիկ Հ.Մ.Ը.Մ.ի անունը կը լսեն տարբեր մարզախաղերու մէջ եւ անոր արձանագրած յաղթանակներուն իբրեւ զնահատական՝ կը ծափահարեն անոր:

Խիամէ յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը միայն հայ համակիրներ չունի, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը լիբանանեան տարողութեամբ ակումբ մըն է, որուն ձեռքբերումներուն համար նաեւ կ'ուրախանան Պէյրութի եւ Լիբանանի բոլոր բնակիչները:



Եղբ. Յովակ Թիւրքեան կը պարգևատրուի Կեդրոնական Կարգութեան «Արտակարգ» պատուանշանով:





Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան: Աջին՝ շեփորախումբը կը կատարէ հանդիսութեան բացումը:

Ան ըսաւ, թէ ինչպէ՛ս կարելի է հպարտանալ Հ.Մ.Ը.Մ.ով, երբ այս միութիւնը չորս անգամ փինկ-փոնկի եւ ճատրակի արաբական աշխարհի ախոյեան հանդիսացած է:

Ձէյտ Խիամէ նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը պէտք է յաւելեալ ուժականութեամբ շարունակէ իր ընթացքը, որպէսզի ան մնայ Լիբանանի մարզական կեանքին երաշխիքն ու «միութիւններու ծաղիկը»:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Գեղարուեստական յայտագիրով, Համազգայինի «Բնար» պարախումբը

ներկայացուց զոյգ պարեր, որոնք, արժանացան ներկաներու ջերմ գնահատանքին:

ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄՆԵՐԸ

90ամեակի հանդիսութիւնը յատուկ փայլք ստացաւ վաստակաւոր Հ.Մ.-

Ը.Մ.ականներու պարզեւատրումով: Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ «Ծառայութեան» շքանշաններու արժանացան հետեւեալ եղբայրներն ու քոյրերը.- Ճոնի Արեւեան, Սարգիս Աճէմեան, Արտա Գալիաքեան, Գէորգ Գարապոյճեան, Վարուժան Գէորգեան, Արաքս Գուլաճեան, Վարդգէս Կս-


Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԹՅՈՒՆ ԾԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Միութեան հիմնադրութեան 90ամեակին նուիրուած փառաշուք հանդիսութենէն շաբաթ մը ետք, Շաբաթ, 22 Նոյեմբեր 2008ին տեղի ունեցաւ նոյն առիթին նուիրուած ճաշկերոյթ-պարահանդէսը, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, կազմակերպութեամբ Լիբանանի Շրջանային Վարչութեան:

Ճաշկերոյթը խանդավառեց Մ. Նահանգներէն յատկապէս հրաւիրուած երգիչ Ատիս Հարմանտեան, ընկերակցութեամբ Սեդօ Պաղտասարեանի եւ իր նուագախումբին:

Ներկաները, աւելի քան 450 Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ համակիրներ, երկար ժամեր անցուցին խանդավառ մթնոլորտի մէջ: Կազմակերպիչ Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ ատենապետ եղբ. Սովսէս Պարսումեան: Ան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի շուրջ բոլորուած ազգայիններուն եւ ներկայացուց միութեան անմիջական ծրագիրները: Ան նաեւ ուրախութեամբ նշեց, որ միութեան 90ամեակին առիթով եւ ազնիւ բարերարի մը շնորհիւ, 2009ի պատի օրացոյցը ձրիօրէն պիտի բաժնուի բոլորին:

Այնուհետեւ, մթնոլորտը շարունակուեցաւ յաւելեալ ոգեւորութեամբ: Յաջորդեցին շուրջպարեր եւ ազգային-յեղափոխական երգեր: Խանդավառուած մթնոլորտէն՝ կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ:



Լիբանանի Շրջանային Վարչութեան առաջարկով եւ Կեդրոնական Վարչութեան որոշումով «Արժանեաց» շքանշանի արժանացած եղբայրներ Վարդգէս Հայրապետեան, Ժագ Պոյաճեան, Յարութիւն Մարկարոսեան եւ Յովհաննէս Ծատուրեան:



կիրառական, հանգուցեալ Յարուժիկն թագուորեան (չքանչանը ստանձնեց տիկինը՝ Սեդա թագուորեան), Լեւոն թաշեան, Վարուժան թորիկեան, Միշէլ Տիք Սորողեան, Վարդգէս Ծատուրեան, Աբո Մոսիկեան, Նազիկ Յովհաննէսեան-Նատէր, Ժիրայր Նալպանտեան, Սամուէլ Պոյաճեան, Երջան Սահակեան եւ հանգուցեալ Անի Տօնիկեան (չքանչանը ստանձնեց դաւակը՝ Սեպուհ Տօնիկեան):

Շրջանային Վարչութեան առաջարկով եւ Կեդրոնական Վարչութեան որոշումով «Արժանեաց» շքանշանով պարգեւատրուեցան եղբայրներ Վարդգէս Հայրապետեան, Յովհաննէս Ծատուրեան, Ժազ Պոյաճեան եւ Յարուժիկն Մարկարոսեան:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը «Արտակարգ» պատուանշան յանձնեց եղբ. Յրայկ Թիւթէլ-

եանին: Կեդրոնական Վարչութիւնը այս առիթով «Արժանեաց» շքանշանով պարգեւատրեց բաղամեայ, վաստակաշատ եւ անձնուէր իր նախկին անդամներէն եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանը: Օրուան մեծագոյն անակնկալը սակայն եղաւ նահատակ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի յետ մահու պարգեւատրումը միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով: Շքանշանը յանձնուեցաւ այս առիթով յատկապէս Մ. Նահանգներէն հրաւիրուած եղբ. Վարդգէսի տիկնոջ՝ քոյր Գարմէն Տէր Կարապետեանին, առ զնահատանք Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի հիմնադիրին, բաղամեայ ու վաստակաշատ բեղուն գործիչին եւ Կեդրոնական Վարչութեան առաջին ատենապետին:

ՔՈՅՐ ԳԱՐՄԷՆ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԽՕՍՔԸ՝ ԳՈՒՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ

Վեհափառ Տեր,
Յոգեշնորհ հայրեր,
Պատուարժան հիւրեր,
Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ
եւ Հ.Մ.Ը.Մ.ատներն,



ՇՆՈՐ ՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՕՍՔԵՐԸ

Պարգեւատրուողներու կողմէ խօսքեր արատասանեցին եղբայր Պատրիկ Կիւլպէնկեան եւ քոյր Գարմէն Տէր Կարապետեան: Եղբ. Կիւլպէնկեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, «Մարզիկ» պաշտօնաթերթին, որուն վարչական կազմին մէջ կը գործէ երկար տարիներէ ի վեր, եւ իրեն գործակից՝ անցեալի Կեդրոնական Վարչութիւններու անդամներուն:

Քոյր Գարմէն Տէր Կարապետեան գրաւոր խօսքով մը յայտնեց. «Սփիւռքի մեր կառույցներէն իւրաքանչիւրը ունեցած է, ունի եւ պիտի ունենայ իր կարևոր դերը մեր հասարակական կեանքի կազմաւորման եւ յարատեւման մէջ: Եթէ այդ կառույցներէն մէկը հայուն միտքն ու հոգին կը բաւարարէ, միւսը՝ սիրտն ու խիղճը, միւսը՝ կամքն ու բազուկը, եւ դեռ մէկ ուրիշը՝ հաւատքն ու յոյսը, ապա Հ.Մ.Ը.Մ.ը այս բոլորէն ունենալով հանդերձ՝ հայուն կողմէ տայ նաեւ առողջ մարմինը, խաղն ու ընկերականութիւնը, կարգապահութիւնը ու յաղթանակի հմայքը, եւ այս է պատճառը, որ Հ.Մ.Ը.Մ.ը ամէնէն աւելի քաջողակն ու իր երիտասարդները իրեն կապելու, իր հովանիին տակ համախմբելու եւ իր գործունէութեամբ համախմբելու» (խօսքին ամբողջութիւնը տեսնել առանձին):

Շատ մեծ յուզումով ընդունեցի այս հանդիսութեան առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ինծի ուղղուած հրաւերը, որ անակնկալ էր եւ յուզիչ. անոր համար սրտանց շնորհակալութիւն կը յայտնեմ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Սփիւռքի մեր կառույցներէն իւրաքանչիւրը ունեցած է, ունի եւ պիտի ունենայ իր կարևոր դերը մեր հասարակական կեանքի կազմաւորման եւ յարատեւման մէջ: Եթէ այդ կառույցներէն մէկը հայուն միտքն ու հոգին կը բաւարարէ, միւսը՝ սիրտն ու խիղճը, միւսը՝ կամքն ու բազուկը եւ դեռ մէկ ուրիշը՝ հաւատքն ու յոյսը, ապա Հ.Մ.Ը.Մ.ը այս բոլորէն ունենալով հանդերձ՝ հայուն կու տայ նաեւ առողջ մարմինը, խաղն ու ընկերականութիւնը, կարգապահութիւնը եւ յաղթանակի հմայքը, եւ այս է պատճառը, որ Հ.Մ.Ը.Մ.ը ամէնէն աւելի քաջողակն ու իր երիտասարդները իրեն կապելու, իր հովանիին տակ համախմբելու եւ իր գործունէութեամբ խանդավառելու ո՛չ միայն երիտասարդները, այլեւ կակուղ թաթիկէն մինչեւ պատկառելի ծերունիները:

Ասոր փաստն են աշխարհացրիւ այն բոլոր մասնաճիւղերը, որոնց մասին «Մարզիկ»ի էջերուն մէջ կը կարդանք: Յոս կ'ուզեմ ըսել, որ Վարդգէս Հ.Մ.Ը.Մ.ի հետ անցուցած տարիներուն ամէնէն աւելի խանդավառ էր «Մարզիկ»ով եւ նոր մասնաճիւղերու ստեղծումով. իսկ որքան աւելի պիտի հրճուէր, իր հայու հոգին բերկար, որպէս Հ.Մ.Ը.Մ.ական հպարտ զգար, եթէ տեսներ Հ.Մ.Ը.Մ.ը վերընձիւղուած հայրենիքի մէջ:

1918էն մինչեւ 2008, Հ.Մ.Ը.Մ.ը հիմնուած Պոլիս, անցնելով Յայաստան, անցնելով Սփիւռք ու դարձեալ Յայաստան, բոլորեց իր շրջագիծը, յաղթական օղակը փակեց շնորհիւ ձեզի՝ սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ: Ձեր վարձքը կատար եւ դեռ բազմաթիւ տասնամեակներու յաջող երթ: Ընորհակալութիւն:



Ձախին՝ Զ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը «Արժանեաց» շքանշանով կը պարգևատրե եղբ. Պատրիկ Կուլպենկեանը: Աջին՝ Զ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը յետ մահու կը պարգևատրե եղբ. Վարդգես Տեր Կարապետեանը: Շքանշանը կը յանձնուի եղբ. Վարդգեսի կնոջ՝ քոյր Գարմեն Տեր Կարապետեանին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԻԸ

Այնուհետեւ, 90ամեակի հանդիսութեան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադիր եղբ. Կարպիս Գապասագայեան: Ան ըսաւ, որ այս հանդիսութիւնը շարժա-

ռիթ մըն է 90 տարիներու պատմութեան անդարձ, բայց միշտ ապրող էջերը թերթատելու, յստակատես հայեացքով պատմութեան ոսկեմատեանէն դասեր քաղելու եւ հաստատ քայլերով շարունակելու դէպի նոր հորիզոն բացուող յաւիտենական երթը, նոյն հաւատքով, միեւնոյն վճռակամութեամբ եւ ամբող-

ջական նուիրումով: Շարունակելով, եղբ. Գապասագայեան հաստատեց, որ միութեան հիմնադիրները նպատակներու իրականացման ի խնդիր ներշնչեցին եւ ի գործ դրին անսահման ծառայութեան ոգի, բոլոր դոհողութիւններու առանցքը նկատելով հոգեկան գոհունակութիւնը, որուն շնորհիւ իրենց առաքինութիւններուն հիմքը հանդիսացաւ խոնարհութիւնը:

Ան նաեւ ըսաւ, որ այսօր, աւելի քան երբեք, Հ.Մ.Ը.Մ.ականներէ կ'ակնկալուի առաւել կամք, առաւել ստեղծագործութիւն եւ առաւել նուիրում, որպէսզի կարելի ըլլայ դիմագրաւել միութեան դէմ ցցուած դժուարութիւններն ու արգելքները:

Եղբ. Գապասագայեան իր խօսքը եզրափակեց պատգամելով, որ 90ամեակի հանդիսութիւնը շարժառիթ մը պէտք է ըլլայ յանձնառու գիտակցութեամբ վերանորոգելու Հ.Մ.Ը.Մ.ի մեծ նշանաբանին ուխտը՝ հետեւելով «Բարձրացիր-բարձրացուր»ի պատգամին (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 4):

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԽՕՍԻԸ

Յաջորդ խօսքը արարեքէնով արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը սերունդներու հոգիներուն մէջ դրոշմուած միութիւն մըն է, որ կը մարմնաւորէ հայ ժողո-

ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ՄԻՇԷԼ ՍԼԷՅՄԱՆԻ ՅՂԱԾ ՈՂԶՈՅՆԻ ԽՕՍԵՐԸ Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Յարգելի անդամներ Զ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան,

Ստացայ հրաւերը ձեր միութեան հիմնադրութեան 90ամեակի հանդիսութեան, որուն նախագահելու առաջարկը ներկայացուցած էիք ինծի: Շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի:

Կը շնորհաւորեմ ձեզ եւ առիթը պատեհ կը նկատեմ ձեզի ցանկալու յարատեւ աշխատանք, ձեր միութեան՝ անսպառ ծառայութիւն, ի խնդիր Լիբանանի մարզական եւ սկաուտական կեանքի վերելքին, ձեր անդամներուն միջեւ մարզական ոգիի, առողջ եւ օրինաւոր մրցակցութեան տրամադրութեան ամրապնդման, յուսալով որ այդ բոլորը կը հարստացնեն ձեր երիտասարդութեան կարողութիւնները եւ զանոնք կ'օժտեն այնպիսի յատկութիւններով, որոնք բարիք կը բերեն ընկերութեան:


Գոհունակութեամբ, հոգուով-սրտով կը մասնակցիմ ձեր հանդիսութեան, մաղթելով որ յառաջիկայ տարիները ձեզի եւ ձեր միութեան կը բերեն յաջողութեան նոր թուականներ:

ԶՕՐ. ՄԻՇԷԼ ՍԼԷՅՄԱՆ
Նախագահ Լիբանանի Հանրապետութեան



ԱՐԺԱՆԵԱՅ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԸ

●ԵՂԲ. ՎԱՐՂՂԵՍ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ



Եղբայր Վարդգես Տեր Կարապետեան կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի առաջին Կեդրոնական Վարչութեան ատենապետը: Պաշտօն մը, զոր ան վարած է 1974էն մինչեւ իր նահատակութիւնը՝ 1986:

Եղբայր Վարդգես Տեր Կարապետեան ծնած է Պէյրութ, 1928ին: Պատանի տարիքէն մաս կազմած է Պէյրութի պատրաստողի տղոց խումբին՝ դառնալով անոր լաւագոյն մարզիկներէն մէկը: 1963ին, ան ամուսնացած է Գարմէն Պու-

տաքեանի հետ:

Մարզական իր գործունէութեան կողքին, եղբայր Վարդգես մասնակցած է Մերձաւոր Արեւելքի Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Ժողովներուն, իբրէն Լիբանանի ներկայացուցիչ: 1973ին, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ը համագաղութային կազմակերպութեան վերածելու կոչուած յատուկ մարմին: Ապա, 1974ին, 1979ին եւ 1983ին ընտրուած է Կեդրոնական Վարչութեան անդամ եւ իբրեւ ատենապետ՝ ձեռնհասօրէն վարած է միութեան աշխատանքները մինչեւ իր նահատակութիւնը:

Այսպէս, ամբողջ 12 տարի, անսակարկ նուիրումով, եղբայր Վարդգես ճիգ չէ խնայած Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցը ղեկելու ամուր հիմքերու վրայ: Բազմաթիւ անգամներ ան այցելած է շրջաններ, իբրէն Կեդրոնական Վարչութեան շրջուն պատգամախօս: Բժախնդրութեամբ եւ խոր հաւատքով մասնակից դարձած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր ձեռնարկներու կազմակերպման:

Իր նահատակութեամբ միութիւնը կորսնցուցած է նուիրեալ ծառայող մը, որ իր յատուկ տեղը ունի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ:

●ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ

Եղբայր Պատրիկ Կիլպենկեան, իբրեւ սկաուտ, Հ.Մ.Ը.Մ.ին մաս կազմած է 1950ին, Պէյրութ: 1960-1970 ան եղած է Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամ: Այնուհետեւ, 1975-1978, ան մաս կազմած է Լիբանանի Շրջանային Վարչութեան, ստանձնելով գանձապահի պաշտօն: 1987-1999 եւ 2003-2007, եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Դ., Ե., Զ. եւ Ը. բանակումներուն ստանձնած է գանձապահի պարտականութիւն:



Եղբ. Պատրիկ պարգեւատրուած է Լիբանանի սկաուտական ֆետերասիոնին եւ լիբանանեան պետութեան երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարութեան կողմէ:

վուրդի գոյատեւման պայքարն ու նկարագիրը:

Առաջնորդը աւելցուց, որ հակառակ իր դիմագրաւած բազմատեսակ դժուարութիւններուն, Հ.Մ.Ը.Մ. երբեք չէ պարտուած, այլ ընդհակառակը՝ բոլոր դժուարութիւնները յաղթահարելով շարունակ բարձր պահած է միութեան ջանք, որ երբեք չի մարիր:

Ան նաեւ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր մարզական ու սկաուտական գործունէութեան կողքին սերունդներու դաստիարակութեան կեդրոն մըն է, որուն մէջ հայ պատանիներն ու երիտասարդները կը թրծուին ազգային ամուր գիտակցութեամբ:

ԱՐՏԱԿԱՐԳ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ

●ԵՂԲ. ՅՈՒԼԿ ԹԻՒԹԵԼԵԱՆ



Եղբայր Յուլակ Թիւթելեան, իբրեւ կակուղ թաթիկ, Հ.Մ.Ը.Մ.ին մաս կազմած է 1931ին, Յալէպ: Ապա, գայլիկ եւ սկաուտ եղած է Ալեքսանտրէթի մէջ: Շրջան մը մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Յալէպի «Չաւարեան» ֆութպոլի երկրորդական խումբին:

Պուրճ Յամուտի քաղաքապետութեան տարիներուն, 1982-1987 եւ 1993-1999, եղբ. Յուլակ Թիւթելեան մեծապէս սատար հանդիսացած է Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն, նիւթաբարոյական լայն աջակցութիւն ցուցաբերելով ֆութպոլի ներկայացուցչական Ա. խումբին:

Իր խօսքին աւարտին, Գեղամ Եպս. Խաչերեան Հ.Մ.Ը.Մ.ին մաղթեց յարատեւ վերելք ու նոր նուաճումներ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը: Ան յայտնեց, որ մարդը արժէք է, երբ կը ծառայէ նուիրական եւ սրբազան նպատակներու ու արժէքներու: Հետեւաբար, պէտք է խոնարհի ծառայութեան դիմաց ու յարգել այն բոլոր անձերը, որոնց կեանքը իրագործուած ու արժեւորուած է ծառայութեամբ:

Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի ուժը կը կայանայ ժողովուրդի բոլոր դասակարգերն ու խաւերը քով-քովի բերելու կարողութեան մէջ, հաստատելով, որ Հ.Մ.Ը.Մ.ի ոգին, հաւատքը, կամքն ու տեսլականը կը կադմեն միութեան ինքնութիւնն ու ինքնորոշութիւնը:

Շարունակելով, Արամ Ա. ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը 90 տարիներու ընթացքին մեր ժողովուրդի կեանքին մէջ դարձաւ հոգեմտաւոր դպրոց մը, ուր ժողովուրդի երազները դարձան մնայուն ներկայութիւն: Ան աւելցուց, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեր կեանքի մայր էջին մէջ մնաց ուժական ներկայութիւն. չխօսեցաւ, այլ՝ ծառայեց ու տուաւ ինքնադոճացման գերագոյն օրինակը:

Արամ Ա. նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը ունի 90ամեայ դրամագլուխ մը, որ ձեռք բերուած է տառապանքներով ու նուիրումով, հարկ է այդ դրամագլուխը նոյն ծառայութեամբ ու աշխատանքով ծաղկեցնել:

Հայրապետական իր պատգամին աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը 90 տարեկան է, բայց չէ ծերացած ու կը մնայ միշտ երիտասարդ: Վերանորոգ կամքով Հ.Մ.Ը.Մ., քայլ՝ յառաջ, յառաջ նահատակ, ցեղի անմահներ, դէպի յաղթանակ»:

Հուսկ, 90ամեակի հանդիսութիւնը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ «Յառաջ նահատակ» քայլերգի կատարումով:

ԱՐԺԱՆԵԱՅ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԸ

●ԵՂԲ. ՅՈՎԿԱՆՆԵՍ ԾԱՏՈՒՐԵԱՆ



Եղբայր Յովհաննես Ծատուրեան ունի աւելի քան 50 տարուան միութենական ծառայութիւն: Եղած է Հ.Ս.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ:

Եղբ. Ծատուրեանի անունը առաւելաբար կապուած է լիբանանեան հեծելարշաւին, ուր Հ.Ս.Ը.Մ.ի շապիկով երկար տարիներ ան արձանագրած է փայլուն արդիւնքներ, յատկապէս ժամացոյցի դէմ արագութեան մրցումներուն:

Ան եղած է Լիբանանի հեծիկի ֆետերասիոնի փոխ նախագահ:

●ԵՂԲ. ՎԱՐՊԳԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ



Եղբայր Վարդգէս Հայրապետեան Հ.Ս.Ը.Մ.ին մաս կազմած է 1939ին, Հալէպ: 1957ին եղած է Հ.Ս.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի անդամ, իսկ 1960-1980, որոշ ընդհատումներով, մասնաճիւղի վարչական, իսկ այնուհետեւ՝ Հ.Ս.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եւ ատենապետ:

●ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿԱՐՈՍԵԱՆ



Եղբայր Յարութիւն Մարկարոսեան Հ.Ս.Ը.Մ.ին անդամակցած է 1945ին: 1956ին եղած է Հ.Ս.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչական: 1990ական թուականներուն մաս կազմած է Լիբանանի Շրջանային Վարչութեան: Միաժամանակ, 1989-2000 եղած է Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնի անդամ:

●ԵՂԲ. ԺԱԳ ՊՈՅԱԾԵԱՆ



Եղբայր Ժագ Պոյաճեան ունի աւելի քան 60 տարուան միութենական ծառայութիւն: Եղած է ֆութպոլիստ, պասքէթպոլիստ, մարզիչ, Պէյրութի մասնաճիւղի վարչական, Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ Լիբանանի պասքէթպոլի ֆետերասիոնի անդամ:

Եղբ. Պոյաճեան շուրջ քառորդ դար, 1960-1983, եղած է Հ.Ս.Ը.Մ.ի Պէյրութի պասքէթպոլի աղջկանց խումբի մարզիչ: Գրեթէ միաժամանակ, 1962-1983, ան եղած է Լիբանանի

պասքէթպոլի աղջկանց հաւաքականի մարզիչ: Իբրեւ ֆետերասիոնի անդամ, եղբ. Պոյաճեան գլխաւորած է պասքէթպոլի բազմաթիւ պատւիրակութիւններ եւ բազմիցս թեքնիք պատասխանատուութիւններ ստանձնած է պասքէթպոլի արաբական ֆետերասիոնին կողմէ:



ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐՆԵՐԸ

ԵՂՔ. ԾՈՆԻ ԱՐԵՒԵԱՆ



Եղբ. Ծոնի Արևելան Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրուրի մասնաճիւղին անդամակցած է իբրև գայլիկ, սկաուտ, ապա՝ մասնաճիւղի խմբապետ: Եղած է մասնաճիւղի Սկաուտ.

Խորհուրդի անդամ: Տարիներ աշխատած է մասնաճիւղի վարչութեան մէջ, իբրև վարչական եւ ատենապետ: Եղած է Շրջանային խմբապետ, ապա՝ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամ: Երեք շրջան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ վարած է ատենապետի պաշտօն:

Եղած է Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի անդամ, իբրև գանձապահ եւ հաշուապահ:

Եղած է Հ.Մ.Ը.Մ.ական առաջին սկաուտը, որ ստացած է «Wood badge»:

ԵՂՔ. ՍԱՐԳԻՍ ԱՃԵՍԵԱՆ



Եղբ. Սարգիս Աճեմեան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղին: Եղած է վարչութեան անդամ եւ վարած է ատենապետի պաշտօն: Մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ վարած է ատենապետի պաշտօն:

Եղած է Լիբանանի Կարգապահի խումբին: Եղած է Լիբանանի Կարգապահի խումբին: Մարզած է Հ.Մ.Ը.Մ.ի ճիւղի մարզական խումբերը: Վագ-

րի մրցանիշներ արձանագրած է Լիբանանեան ախոյեանութիւններու ընթացքին: 1972ին մասնակցած է Միւնիխի ողիմպիական խաղերուն՝ ներկայացնելով Լիբանանը:



ԵՂՔ. ԳԵՌՐԳ ԳՎՐԱՊՈՅԱԾԵԱՆ



Եղբ. Գեորգ Գարապոյան՝ Եան պատանի հասակէն, 1950ական թուականներէն, մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պեյրուրի մասնաճիւղի մեծ ընտանիքին: 1962ին

փոխանցուած է Պուրճ Յամուտի մասնաճիւղ: Իբրև աթլէթ ան մասնակցած է Լիբանանի ախոյեանութեան: 1983-2001 մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան աթլէթի յանձնախումբին, իբրև անդամ, իսկ վերջին 13 տարիներուն՝ իբրև ատենապետ:

ԵՂՔ. ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՌՐԳԵԱՆ

Եղբ. Վարուժան Գեորգեան 1948 թուականէն մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Յամուտի գայլիկական խումբին, ապա մաս կազմած է աթլէթի խումբին, նոյն ժամանակ հետեւելով մարմնամարզի փորձերու:



1965ին նշանակուած է Շրջանային Վարչութեան աթլէթի յանձնախումբի անդամ եւ ապա ստանձնած է անոր ատենապետի պաշտօնը: Մաս

կազմած է Պուրճ Յամուտի մասնաճիւղի վարչութեան իբրև անդամ, ապա՝ ատենապետ: 1987ին ընտրուած է Շրջանային Վարչութեան անդամ եւ 8 շրջան մաս կազմած է անոր: 1990ին ընտրուած է Լիբանանի աթլէթիկ միջազգային ֆետերասիոնի անդամ եւ այսօր կը վարէ ֆետերասիոնի փոխ նախագահի պաշտօնը:

ՔՈՅՐ ԱՐԱՔՍ ԳՈՒԼԱԾԵԱՆ



Քոյր Արաքս Գուլաճեան մանուկ տարիքէն մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շարքերուն:


1969 - 1977 եղած է Պեյրուրի մասնաճիւղի արեւոյշ խմբապետուհի: Մասնակցած է «Wood badge»ի սեմինարներուն: 1973-1976 օգնական խմբապետուհի եղած է «Wood badge»ի խմբապետական կազմին: 1973ին միջ-արաբական ճամպորհի արեւոյշ խմբապետուհի եղած է: Նոյն տարին, միջ-արաբական սկաուտական ֆետերասիոնին մէջ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ: 1977էն ետք, որոշ ընդմիջումներով, եղած է Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամ եւ ստանձնած է ատենապետուհիի պաշտօն:

Եղած է Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի անդամ, իբրև գանձապահ եւ հաշուապահ: Եղած է Հ.Մ.Ը.Մ.ական առաջին սկաուտը, որ ստացած է «Wood badge»:

ԵՂՔ. ՎԱՐԴԳԵՍ ԷՍԿԻՊԱԾԵԱՆ

Եղբ. Վարդգէս Էսկիպաշեան 1965ին եղած է Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍԻ հիմնադիր անդամներէն:

1972ին ան մաս կազմած է մարզական խորհուրդի մը, որ ստանձնած է պասքէթի եւ փիսկ-փոնկի միջ-մասնաճիւղային խաղերու հետապնդումը եւ



գործադրությունը: Երկար տարիներ ծառայած է Հ.Ս.Ը.Ս.ի աթլետին:

ԵՂՔ. ՅԱՐՈՒԹԻՆ ԹԱԳՈՐԵԱՆ (ՅԵՏ ՄԱՅՈՒ)



Եղբ. Յարու-թին Թագորեան մանուկ հասակէն մաս կազմած է Հ.Ս.Ը.Ս.ի գայլիկական, ապա սկաուտական շարքերուն: Եղած է Անթիլիասի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի անդամ, վարելով ատենապետի պաշտօնը:

Եղած է Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամ, ստանձնելով ատենապետի պաշտօնը:

Մաս կազմած է Լիբանանի Շրջանային Վարչութեան, ստանձնելով գանձապահի եւ հաշուապահի պաշտօններ:

ԵՂՔ. ԼԵՈՆ ԹԱՇՃԵԱՆ



Եղբ. Լեոն Թաշճեան 1966ին անդամակցած է Հ.Ս.Ը.Ս.ի Այնճարի մասնաճիւղի սկաուտական շարքերուն: Եղած է ֆութպոլի մարզիկ: 10.000 մեթրի Լիբանանի վազքի ախոյեան հանդիսացած է 1974ին: Մաս կազմած է Հ.Ս.Ը.Ս.ի Այնճարի մասնաճիւղի վարչութեան: Մինչեւ օրս կը մասնակցի Լիբանանի բոլոր մարաթոններուն:

Եղբ. Լեոն Լիբանանի ազգային խումբին հետ մասնակցած է միջազգային բազմաթիւ մարաթոններու:

ԵՂՔ. ԺԻՐԱՅՐ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Եղբ. Ժիրայր Նալպանտեան մակութենէն եղած է Հ.Ս.Ը.Ս.ական մարզիկ, ֆութպոլիստ: Մաս կազմած է

Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութեան:

Եղած է Շրջանային Վարչութեան ֆութպոլի յանձնախումբի անդամ: Անատենապետի պաշտօն վարած է Անթիլիասի մասնաճիւղի պասքեթպոլի յանձնախումբին:

ԵՂՔ. ՎԱՐՈՒԺԱՆ ԹՈՐԻԿԵԱՆ



ճիւղի վարչական:



Եղբ. Վարուժան Թորիկեան մեծ ներդրում ունեցած է Հ.Ս.Ը.Ս.ի Ճիւղի մասնաճիւղի հիմնադրութեան մէջ: Երկար տարիներ եղած է Ճիւղի մասնա-

ԵՂՔ. ՄԻՉԵԼ ՏԻՔ ԽՈՐՈՉԵԱՆ

Եղբ. Միշել Տիք Խորոզեան 1944 թուականէն սկսեալ եղած է գայլիկ, սկաուտ: Անթիլիասի մասնաճիւղին մէջ երկար տարիներ եղած է վարչական եւ վարած է քարտուղարի եւ հաշուապահի պաշտօններ:

Հինգ շրջան եղած է Հ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ, իբրեւ քարտուղար եւ հաշուապահ:

ԵՂՔ. ՎԱՐՂԱԿԵՍ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Եղբ. Վարդգես Ծատուրեան 1958ին եղած է Լիբանանի հեծելարշաւի ախոյեան, ներկայացնելով Հ.Ս.Ը.Ս.ը:

1959ին, Մարոքի մէջ տեղի ունեցած միջ-արաբական հեծելարշաւի

մրցաշարքին, գրաւած է երկրորդ դիրքը, իսկ նոյն մրցումի խմբային դասաւորման մէջ գրաւած է երրորդ դիրքը:

Մաս կազմած է Հ.Ս.Ը.Ս.ի Պէրութի վարչութեան: Երկար տարիներ եղած է Շրջանային Վարչութեան ԼԵՎԱՄի յանձնախումբի ատենապետ: Եղած է նաեւ Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի ազգային խումբի խմբապետ:



ԵՂՔ. ԱՔՕ ՄՈՍԻԿԵԱՆ



Եղբ. Աքօ Մոսիկեան 1950-ական թուականներէն սկսեալ Պուրճ Համուտի մասնաճիւղին մէջ եղած է գայլիկ, սկաուտ, ապա՝ փոխ խմբապետ: Եղած է Պուրճ Համուտի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի անդամ, ապա՝ վարչական:

1995էն ի վեր եղբ. Աքօ մաս կը կազմէ «Մարզիկ» ամսաթերթի վարչութեան:

ՔՈՅՐ ՆԱՉԻԿ ՆԱՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Քոյր Նաչիկ Նատեր Յովհաննեսեան եղած է Հ.Ս.Ը.Ս.ի փինկփոնկի մարզիկ, Լիբանանի փինկփոնկի աղջկանց խումբի հաւաքականի անդամ:


1956-1960 ան մասնակցած է արաբական եւ միջազգային ախոյեանութիւններու:

1957ին եւ 1965-1991 եղած է Լիբանանի փինկփոնկի ախոյեանուհի:





ԵՂՔ. ՍԱՄՈՒԷԼ ՊՈՅԱԾԵԱՆ



Եղբ. Սամուել Պոյաճեան 1947ին եղած է Զ.Ս.Ը.Մ.ի Այնճարի մասնաճիւղի առաջին Արի խումբի անդամ: Վարած է վարիչ առաջնորդի պաշտօն: Փոխանցուած է Զ.Ս.Ը.Մ.ի Ժըտէյտիի մասնաճիւղ եւ մաս կազմած է պասքէթպօլի, ֆութպօլի, ընկերային յանձնախումբերուն, Սկաուտ. Խորհուրդին եւ վարած է վարչական պաշտօն, իբրեւ ատենապետ:

Վերստին Այնճար փոխադրուելով, ան ստանձնած է մասնաճիւղի վարչութեան ատենապետի պաշտօնը:

ԵՂՔ. ԵՐԶԱՆ ՍԱՅԱԿԵԱՆ



Եղբ. Երջան Սահակեան 1950 ա կ ան թուականներէն եղած է մարզիկ Զ.Ս.Ը.Մ.ի Թրիփոլիի մասնաճիւղին մէջ:

Կրած է հիւսիսային Լիբանանի պասքէթպօլի լաւագոյն մարզիկի տիտղոսը: Եղած է Թրիփոլիի մասնաճիւղի վարչութեան անդամ՝ երկար տարիներ:

Զ.Ս.Ը.Մ.ի Թրիփոլիի աղջկանց եւ տղոց պասքէթպօլի խումբերը մարզած է եւ ցարդ կը մարզէ:

Եղած է Լիբանանի պասքէթպօլի ֆետերասիոնի իրաւարար:

ԶՈՅՐ ԱՆԻ ՏՕՆԻԿԵԱՆ (ՅԵՏ ՍԱՅՈՒ)



Զոյր Անի Տօնիկեան 1970-ական թուականներէն եղած է Զ.Ս.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի անդամ: 1947ին փոխանցուած է Ժըտէյտիի մասնաճիւղ եւ ըստանձնած է մասնաճիւղի գլխաւոր պատասխանատուութիւնը:

1980ական թուականներուն եղած է Երջանային խմբապետուի: 1986ին, եղած է Լիբանանի պատուիրակութեան խմբապետուի՝ համա-Զ.Ս.Ը.-Մ.ական Գ. բանակումին:

Եղած է Երջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետուի:

Հ.Ս.Ը.Մ.Ի ԺԸՏԷՅՏԷԻ ՄԱՍՆԱԾԻԲՂԻՆ 90ԱՄԵԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Զ.Ս.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՐ ԺԸՏԷՅՏԷ

Հ.Ս.Ը.Մ.ի Հիմնադրութեան 90ամեակի նակատարութիւններու շարքին, Շաբաթ, 16 Օգոստոս 2008ի երեկոյեան, Հ.Ս.Ը.Մ.ի Ժըտէյտէի մասնաճիւղը պարահանդէսով մը նշեց նշանակալից տօնը: Պարահանդէսը տեղի ունեցաւ «Ուսպիթ Թաուր» պանդոկին մէջ, ներկայութեամբ մասնաճիւղի անդամներու, հիւրերու եւ բարեկամներու:

Պարահանդէսին պաշտօնական բացումը կատարուեցաւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Բաֆֆի Յակոբեանի խօսքով: Եղբայրը ներկաներուն մաղթեց հաճելի երեկոյ, ուրախ եւ բարձր տրամադրութեամբ, պահ մը մոռնալու համար առօրեայ մտահոգութիւնները եւ գործնական աջակցութեամբ սատար հանդիսանալու մասնաճիւղի աշխատանքներուն:

Պարահանդէսը միայն պարով եւ կերուխումով չանցաւ: Մասնաճիւղին վարչութիւնը պատրաստած էր հաճելի անակրկալ մը: Հ.Ս.Ը.Մ.ի Հիմնադրութեան 90ամեակին առիթով, վարչութիւնը պարգեւատրեց մասնաճիւղի վաստակաշատ երեք եղբայրներ՝ Լեւոն Փանոսեանը, Գէորգ Աւրանը եւ Հրանդ Պետրոսեանը (ի բացակայութեան): Պարգեւատրումը կատարեցին Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ քոյր Սիրվա Սաղրեան եւ մասնաճիւղի ատենապետը: Պարգեւատրեալները եղած են մասնաճիւղի Հիմնադիր սերունդի ան-



դամներ, որոնք այնուհետեւ երկար տարիներ գործած են անոր յարկին տակ՝ անսակարկ նուիրելով իրենց հանգիստն ու ժամանակը:

Պարգեւատրումի պահը յուզիչ էր եւ թեյադրական: Բոլորը գնահատեցին վարչութեան նախաձեռնութիւնը, մաղթելով որ նորերը հետեւին վաստակաշատ հիւնքերու օրինակին:

Պարահանդէսին աւարտին, մասնաճիւղը շնորհակալութեան խօսքեր յայտնեց Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ վարչութեան կողքին գործող յանձնախումբերուն ու նուիրատուներուն, որոնց ջանքերով մասնաճիւղը կը մնայ կանգուն եւ կը ձգտի դէպի լաւին ու լաւագոյնին:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՄԱՀԱՑԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

90 ամեակի հանդիսութեան կաղմակերպիչ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը չմոռցաւ յիշելու միութենէն յաւատ քաժնուած վաստակաւոր քույրերն ու եղբայրները: Կիրակի, 16 Նոյեմբեր 2008ին, Պէյրութի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին: Պատարագը հանդիսապետեց եւ օրուան քարոզը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան:

Իր քարոզին մէջ, Առաջնորդը անդրադարձաւ նուիրումի գաղափարին եւ իր գնահատանքը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդական սերունդներու ազգին ու հայրենիքին անսակարկ նուիրումի երեւոյթին համար: Ան կոչ ուղղեց միութեան երիտասարդ սերունդին ընթանալու հինքու ուղիով:

Հոգեհանգիստէն ետք, ներկաները բարձրացան Ազգային Առաջնորդարանի դահլիճը, ուր մատուցուեցաւ հոգեսուրճ: Աւարտին, անդարձ մեկնած Հ.Մ.Ը.Մ.ականներու համար



Ներկաները իրենց ցաւակցութիւնները յայտնեցին Առաջնորդ Հօր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութեան անդամներուն:

ԵՂԲ. ՎԱՀԷ ՉՈՔԿԱՐԵԱՆԻ ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

8 Հոկտեմբեր 2008ին, հարաւային Լիբանանի Մաժտալիուն գիւղին մէջ (Մայտալի արեւելքը), 86 տարեկանին, իր մահկանացուն կնքեց Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի վարչութեան երբեմնի երախտաշատ դէմքերէն եղբ. Վահէ Չոքկարեանը:

Եղբ. Չոքկարեան երկու տարի առաջ արժանացած էր միութեան «Արժանեաց» շքանշանին: Ան 1953-1962 եղած էր Հայէպի վարչութեան փոխ ատենապետ եւ ատենապետ: Նախապէս ան գործած էր Պէյրութի եւ Դամասկոսի մէջ:

Եղբօր թաղումը տեղի ունեցաւ նոյն օրը, յետմիջօրէին, Մաժտալիունի մէջ: Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ գիւղին յոյն ուղղափառ եկեղեցւոյ մէջ, ներկայութեամբ Պէյրութի Ս. Նշան Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մկրտիչ Քհնյ. Քէշիշեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանի, «Մարգիկ» խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներու եւ հարազատներու:

Եկեղեցական արարողութենէն ետք, դամբանական խօսք արտասանեց «Մարգիկ» խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան: Ան ներկայացուց եղբ. Չոքկարեանի տարիներու վաստակը եւ յատկապէս շեշտեց խոնարհութեան եւ համեստութեան

այն յատկութիւնները, որոնցմով կը բնորոշուէր ան: Եղբ. Չոքկարեան ամէնէն աւելի սկզբունքի մարդ էր, դառնացած էր կեանքի յոռի երեւոյթներէն, սակայն ամբօրէն կառչած էր Հ.Մ.Ը.Մ.ական իր համոզումներուն եւ դաշնակցական մարդու իր ըմբռնումներուն, ըսաւ եղբ. Աւագեան եւ աւելցուց, որ թէեւ ան հայութեան մէջ չէր, սակայն հայութիւնը իր մէջն էր, մօտէն կը հետաքրքրուէր Հ.Մ.Ը.Մ.ով եւ հայ կեանքի իրադարձութիւններով, ըլլալով տիպար հայ մը եւ պարկեշտ Հ.Մ.Ը.Մ.ական մը:

Յուղարկաւորութենէն ետք, եղբայր Չոքկարեանի դագաղը ուսամբարձ փոխադրուեցաւ գիւղին գերեզմանատունը, ուր վերջին յարգանքի արժանացաւ Հ.Մ.Ը.Մ.ական իր եղբայրներուն կողմէ:

Գերեզմանատունէն վերադարձին, եղբօր հարազատները ցաւակցութիւններ ընդունեցին եկեղեցւոյ սրահին մէջ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՈՒՄԵԱԿԻ ՓԱՌԱՀԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

Գրիգոր Յոթոյեան ԹՈՐՈՆԹՈ

Նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Օնթարիոյի մասնաճիւղերուն եւ նախագահութեամբ Արմենակ Ալաճաճեանի, միութեան հիմնադրութեան 90ամեակի փառահեղ տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 25 Հոկտեմբեր 2008, կէսօրէ ետք ժամը 2:30ին, Հայ կեդրոնի սրահին մէջ: Տօնակատարութեան ներկայ գտնուեցան Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Մեդրիկ Ծ. Վրդ. Բարիբեան, Քէմպրիճի Ս. Նշան եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Կոմիտաս Քհնյ. Ստեփանեան, Սէնթ Գաթրինի Ս. Պօղոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Սիրիան Վրդ. Քէչէճեան, Քէմպրիճի Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ Վեր. Յովհաննէս Սարմաղեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեան, Հ. Յ. Դաշնակցութեան Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Զոհրապ Թաթիկեան, տօնակատարութեան նախագահ՝ Արմենակ Ալաճաճեան, պատկան մարմիններու ներկայացուցիչներ, հիւրեր, հրաւիրեալներ եւ շուրջ 500 Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ աղագայիններ:

Վերոյիշեալ պաշտօնական տօնակատարութենէն առաջ, յաւարտ Ս. Պատարագի, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ական սկսուածներու, անդամներու եւ համա-

կիրներու, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ննջեցեալ քոյրերու եւ եղբայրներու յիշատակին:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 90ամեակին առթիւ, Գանատայի Շրջանային Վարչութիւնը գնահատելի գաղափարը ունեցած էր հրատարակել գեղեցիկ յուշամատեան մը, որուն մէջ միութիւններու եւ կաղմակերպութիւններու շնորհակարարական խօսքերուն կողքին, հրատարակուած էին նաեւ Մեծի Տանն Կիլիկոյ Արամ Ա. Կաթողիկոսին եւ Գանատայի Առաջնորդ Խաժակ Արք. Յակոբեանի օրհնութեան խօսքերը:

Տօնակատարութիւնը սկսաւ պաշտօնական անձնակազմութիւններու եւ սկսուածներու սրահ մուտքով, առաջնորդութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի սկսուածական նուագախումբին:

Գանատայի եւ Հայաստանի օրհներգներու, Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգի ունկընդրութենէն ետք, բացման խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար քոյր Յոլեր Փանոսեան: Ապա, բարի գալուստի խօսք արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի

Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Հելէն Նաճարեան:

Հայրենի նշանաւոր բանաստեղծ Վահագն Դաւթեանի «Հաւատում եմ քեզ» քերթուածը արտասանեց քոյր Թամար Տօնապետեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց Վարչութեան ատենապետ եղբ. Բարգէն Կարապետեան, ներկայացնելով Գանատայի մասնաճիւղերու հիմնադրութեան եւ գործունէութեան պատմականը:

Տեսերիդով ցուցադրուեցան շրջանի մասնաճիւղերուն աշխատանքները՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութենէն մինչեւ մեր օրերը:

Սկսուածական եւ բանակումի քայլերգները, ինչպէս նաեւ «Ով Հայ Արի» երգը երգուեցան սկսուածներու կողմէ:

Քոյր Մարինա Կարապետեան դաշնամուրով նուագեց Առնօ Պապաջանեանի «Նոքթիւրն» եղանակը:

Օրուան պատգամներն էր եղբ. Զարեհ Տէրվիչեան, որ ընդհանուր ակնարկով մը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան պայմանները եւ 1918ի Հանրապետութեան ունեցած նպաստը:

Եղբ. Տէրվիչեան Հ.Մ.Ը.Մ.ի պատմականը եւ առաքելութիւնը ներկայացնելէ ետք շեշտեց ղանաղան գաղափարներ եւ խորհուրդներ (խօսքը տեսնել էջ 6):

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վահան Զայրբեան բեմ բարձրանալով ներկայացուց տօնակատարութեան նախագահութիւնը ստանձնած Արմենակ Ալաճաճեանը, պատգեթպոյի 1960ական տարիներու Խ. Միու-





Տոնակատարութեան խօսքեր կ'արտասանեն եղբայրներ Վահան Զալլըքեան, Բարգէն Կարապետեան, Արմեն Կետիկեան, Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, եւ օրուան նախագահ Արմենակ Ալաճաճեան: Վերջին նկարը՝ մասնաճիւղին սկաուտական շեփորախումբը:

թեան եւ Եւրոպայի փայլուն աստղը, որ տիրացած է միջազգային դանադան մրցանակներու:

1977էն ի վեր Արմենակ Ալաճաճեան հաստատուած է Գանատա եւ եղած է համահայկական խաղերու եւ Հ.Մ.Ը.Մ.ի բարերար:

90ամեակի տօնակատարութեան ուրախ առիթով Ալաճաճեան տասը հաղար տողար նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ին եւ Գանատայի Շրջանային Վարչութեան կողմէ պարգեւատրուեցաւ յատուկ յուշանրէկրով:

Պարգեւատրումէն ետք, Ալաճաճեան խօսեցաւ ազգային եւ հայրենասիրական ճառ մը, նոր սերունդը հրաւիրելով անդամագրուելու Հ.Մ.Ը.Մ.ին եւ ծառայելու հայ ազգին ու Հայաստանին:

Այնուհետեւ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանի տուչութիւն: Երեք Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Գէորգ Սարխանեան, Սամսոն Քահաբէճեան եւ Հրայր Շահինեան արժանացան Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին: Պարգեւատրեալներուն ամփոփ կենսագրականները կարդաց եղբ. Վահան Զալլըքեան: Այնուհետեւ, «Հայաստան» երգը երգուեցաւ Մարիա եւ Վանիա Քէշիշեաններու կողմէ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Արմէն Կէտիկեան: Ան շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակը եւ Գանատայի մէջ ստեղծման 50ամեակը, ապա անդրադարձաւ միութեան հիմնադրութեան եւ առաքելութեան, ընդգծելով որ Հ.Մ.Ը.Մ. միտք եւ մարմին կերտելու պարտականութեան կողքին ունի հայկական մաքուր նկարագիր, հայրենասիրութիւն, եկեղեցասիրութիւն եւ ազգասիրութիւն ջամբելու նպատակ եւ գործունէութիւն:

Եղբ. Կէտիկեան գնահատեց եւ շնորհակալութիւն յայտնեց ձեռնարկը կազմակերպող յանձնախումբին: Փակման խօսքով հանդէս եկաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան: Ան խորիմաստ ճառ մը խօսեցաւ՝ թուելով Հ.Մ.Ը.Մ.ի կարեւորութիւնը մեր ժողովուրդի կեանքին մէջ, հրաւիրելով եւ խրախուսելով հայ նոր սերունդները, որպէսզի հետեւին վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու ճանապարհին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը մնայ միշտ այժմէական եւ օրինակելի Հայաստանէն, Զաւախքէն մինչեւ աշխարհի չորս ծագերը գործող մասնաճիւղերը: Տեղի ունեցաւ մոմավառութիւն: Կարկանդակը ողողուեցաւ 90 մոմերով, որոնք զրուեցան Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներու եւ քույրերու կողմէ: Եղան նուիրատուութիւններ՝ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ին:

Եղբ. Կէտիկեան գնահատեց եւ շնորհակալութիւն յայտնեց ձեռնարկը կազմակերպող յանձնախումբին: Փակման խօսքով հանդէս եկաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան: Ան խորիմաստ ճառ մը խօսեցաւ՝ թուելով Հ.Մ.Ը.Մ.ի կարեւորութիւնը մեր ժողովուրդի կեանքին մէջ, հրաւիրելով եւ խրախուսելով հայ նոր սերունդները, որպէսզի հետեւին վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներու ճանապարհին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութիւնը մնայ միշտ այժմէական եւ օրինակելի Հայաստանէն, Զաւախքէն մինչեւ աշխարհի չորս ծագերը գործող մասնաճիւղերը: Տեղի ունեցաւ մոմավառութիւն: Կարկանդակը ողողուեցաւ 90 մոմերով, որոնք զրուեցան Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներու եւ քույրերու կողմէ: Եղան նուիրատուութիւններ՝ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻ ՄԵԾԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՒՆ ՆԻՒ ԸԸՐՁԻՒՄԵՁ

Թղթակից
ՆԻՒ ԸԸՐՁԻ

Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 90ամեակի տօնակատարութեան շքեղ ճաշկերոյթ-պարահանդէսը տեղի ունեցաւ Ծաբաթ, 27 Սեպտեմբեր 2008ի երեկոյեան, Նիւ Ճրրգիի մէջ, հովանաւորութեամբ թեմի Առաջնորդ Օշական Արք. Զոյրայանի ներկայացուցիչ՝ Սուրէն Արք. Գաթարոյեանի, ներկայութեամբ Նիւ Ճրրգիի Սրբոց Վարդանանց Եկեղեցւոյ հոգեւոր Հովիւ Յովնան Քհնյ. Պողոսեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Երջանային Վարչութեան եւ կաղմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Նիւ Ճրրգիի մասնաճիւղին, նախագահութեամբ՝ տէր եւ տիկին Հայկ եւ Սիլվա Սեղրակեաններու: Երիտասարդութեամբ լեցուն այս հանդիսութեան ներկայ էին 500է աւելի Հ.Մ.Ը.Մ.ականներ ու համակիրներ:

Ճաշկերոյթ-պարահանդէսին բացումէն առաջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 90ամեակը նշող պատմական նկարներու ցուցահանդէս, ուր կոկիկ ձեւով սկսուտական ձեռագիրն աշխատանքներու ընդմէջէն ցուցադրուեցան պատմական նկարներ՝ առնուած Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր եւ Արեւելեան Մ. Նահանգներու շրջանի հարուստ արխիւներէն:

Պաշտօնական բաժինը բացուեցաւ սկսուտներու եւ դրօշակակիրներու տողանցքով, որմէ ետք յաջորդաբար երգուեցան Մ. Նահանգներու, Հայկաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները: Օրուան հանդիսավար եղբ. Անդրանիկ Տէր Օհաննէսեան բարի գալուստի խօսքէն ետք ներկայացուց պատուոյ սեղանի հիւրերը: Սրբաղան հօր, օրուան նախագահներու եւ Երջանային Վարչութեան անդամներու կողքին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան, ինչպէս նաեւ՝ Գանատայի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բարգէն Կարապետեան եւ քոյր կաղմակերպութիւններու ներկայացուցիչներ:

Նշենք, թէ սեղաններու վրայ արդէն իսկ գետեղուած էր յուշամատեան գեղեցիկ գրքոյկը, որուն մէջ տեղ գտած էին պատասխանատու մարմիններու եւ կաղմակերպութիւններու պատգամները, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու

շրջանի եւ տասը մասնաճիւղերու պատմութիւնները, Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու շնորհակալական եւ գնահատական խօսքերը:

Առաջին խօսք առնողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մեսրոպեան: Ան իր խօսքը սկսաւ յայտարարելով, թէ այսօր հոս համախմբուած ենք տօնախմբելու 90 տարի առաջ իրականացած նուիրական այն օրուան յիշատակը, երբ խումբ մը գաղափարապաշտ, հեռատես ու հաւատաւոր երիտասարդներ, 1918ին, Պոլսոյ մէջ յղացան Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը հիմնելու գաղափարը: Ան շեշտեց, որ առաջին օրէն իսկ Ֆիզիքական, մարդական եւ սկսուտական տարագին ընդմէջէն՝ հիմնադիր սերունդը հայ պատանիին ու երիտասարդին աղգային արժէքներով տողերէրու բացայայտ տեսլականը կը փայտայտէր: Պատահական չէ, որ այդ վեհ նպատակը կ'արտացոլայ նոյնինքն նորակաղմ միութեան անունին մէջ, «Հայ» եւ «Մարմնակրթական» բառերուն ընդմէջէն: Առաջինին մէջ աղգային պատկանելիութեան գիտակցութիւնը կը խտանայ, իսկ երկրորդը՝ կրթելու առաքելութիւնը կը շեշտէ: Օգտուելով 90ամեակի տօնակատարութեան առիթէն, եղբ. Մեսրոպեան Միացեալ Նահանգներու Արեւելեան շրջանի Երջանային Վարչութեան անունով երախտագիտութիւն յայտնեց նախորդ սերունդներուն, որոնք տարիներու տքնաջան աշխատանքով օտար ափերու վրայ կեանք տուին շրջանին ու միացան Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի պատմական երթին: Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ անոնց, որոնք այսօր կաղմակերպական ընդունակութիւններով ու նիւթական ներդրումով կը նպաստեն շրջանի հաստատուն երթին:

Յաջորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Երջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բարգէն Կարապետեան: Ան Գանատայի Երջանային Վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Երջանային Վարչութեան հրաւերին, եւ իր սրտագին շնորհաւորութիւնները փոխանցեց միութեան հիմնադրութեան 90ամեակին, հաստատելով թէ հիւսիսային Ամերիկայի ցամաքամասին վրայ գործող Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանները համագործակցելով պիտի շարունակեն Հ.Մ.Ը.Մ.ի յաղթական երթը, նուաճե-



Տոնակատարութեան խօսքեր կ'արտասանեն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիելեան, Սուրեն Արք. Գաթարոյեան, Խաժակ Մկրտիչեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաբգէն Կարապետեան, օրուան նախագահը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահագներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Զրաչ Սեւրոպեան:

լով նորանոր յաջողութիւններ:

Յաջորդեց Հ.Յ.Դ. Արեւելեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Խաժակ Մկրտիչեանի խօսքը: Ան շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակը, բոլոր գործօն անդամները, որոնց վաստակը այսօր կը վայելենք, մաղթելով նորանոր յաջողութիւններ, ու յորդորելով որ յարատեւ աշխատանք տանինք պահելու հայ երիտասարդութիւնը մեր մէջ, հեռու մնալով այլասերման հոսանքներէն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան 90ամեակի խօսքը ընթերցեց եղբ. Վահրամ Դանիելեան: Խօսքին մէջ ղիտել կը տրուէր, որ 90 տարի առաջ՝ 1918ին, հայ ժողովուրդը խորհուրդ խորին զօրութեամբ կերտեց իր վարդահեղեղ ապագան: Սարգարապատի, Բաշ Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտներով՝ 1918 Մայիս 28ին ծնունդ առաւ Ազատ եւ Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը, իսկ նոյն տարուան Նոյեմբեր 16ին խումբ մը իմաստուն եւ տեսլապաշտ հաւատացեալներու յղացումով կեանքի կոչուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը: Խօսքին շարունակութեան մէջ կ'ըսուէր. «Թէեւ 90ամեայ անցեալ ունինք, բայց շատ երիտասարդ ենք տակաւին: Եւ կոչուած ենք աշխատելու մնալու, որովհետեւ միշտ ապրեցանք նոյն խանդով ու միեւնոյն ստեղծագործ հաւատքով: Այդպէս է նաեւ մեր ներկան, ինչպէս եւ տարբեր չի կրնար ըլլալ ապագան: Հետեւաբար, պէտք է ձգտել նպատակասլաց կեանքի ոգին ու պահանջը միշտ կենդանի պահելու նպատակակէտին: Ահա թէ ինչո՞ւ, այսօր, մենք յաւելեալ վճռականութեամբ եւ անխախտ

հաւատքով պիտի շարունակենք Հ.Մ.Ը.Մ.ի անդեղեւ եւ հաւատաքայլ երթը»:

Խօսքին աւարտին, եղբ. Դանիելեան կատարեց երկու յայտարարութիւն. առաջինը կը վերաբերէր Հ.Մ.Ը.Մ.ի 100րդ մասնաճիւղի՝ Մոսկուայի մասնաճիւղի հիմնադրութեան, որ տեղի ունեցաւ 14 Սեպտեմբեր 2008ին, Մոսկուայի Զմայրվօ մարդական հիմնարկին մէջ, նորակազմ մասնաճիւղի հիմնադիր ժողովով: Իսկ երկրորդ լուրը կը վերաբերէր միութեան հիմնադրութեան 90ամեակի յիշատակութեան առիթով, Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, միութեան հիմնադիրին անուամբ՝ «Շաւարշ Քրիսեան լսարան»ի բացումին, պետական անձնաւորութեանց եւ հիւրերու ներկայութեամբ:

Վերջին խօսքը արտասանեց Սուրէն Արք. Գաթարոյեան: Ան յայտնեց, որ այսօր հայերէն խօսելու երեւոյթը վկայ ու ապացոյց է, որ հայկական ոգին վառ կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Ան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը առաքելութիւն եւ զոհողութիւն է, եւ թէ բոլոր դժուարութիւնները պէտք է յաղթահարենք եւ շարքերը խտացնենք: Ան յիշեց, թէ ինչպէս մանուկ հասակին, Հայէպի մէջ, կը տողանցէր իր պատասխանատունը, վարիչներուն եւ խմբապետին ետեւէն, որոնք իրեն տուին այն ոգին, որ մինչեւ այսօր վառ կը մնայ իր մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը պիտի տօնէ ամեակներ, աւելցուց Սրբազան Հայրը, ու մեր ուխտը պիտի ըլլայ վերանորոգուիլ հաւատարմութեամբ ու հաւատքով:

(Շար.ը՝ էջ 40)



Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԷՆ

ԹԵՔՈՅԱ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԸ ՆՈՒԻՐՈՒԵՑԱԲ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿՏԱԿԱՐԱՐ ԵՂԲ. ԵՐՈՒԱՆԴ ՄԻՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մարտ 22-ից
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

2 008ը Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակն էր, որ մեծ շուքիչ նշուեցաւ աշխարհի տարածքին: Այս պատմական առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը Նաւասարդեան իր մարզախաղերը նուիրեց նշանակալից այս տարեդարձին:

Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակով յատկանշուեցաւ նաեւ Կիրակի, 26 Հոկտեմբեր 2008ը: Այդ օր, Շրջանային Վարչութեան առընթեր բազմաթիւ Հ.Մ.Ը.Մ.ականներու ժամադրաւայրը դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Թեքոյա բանակաւայրը, ուր կատարուեցան երկու կարեւոր իրադարձութիւններ:

Առաջինը՝ բանակաւայրի յուշատախտակի բացումն էր, իսկ երկրորդը՝ քննարկում Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ գործունէութեան:

Այս ուրախ առիթով բանակաւայր փութացած էին շրջանի գանազան մասնաճիւղերու վարչական կազմերն ու խմբապետական վարիչ մարմինները: Հոն էին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան ՅՅրդ մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկ. Վահագն եւ Պայծառ Թովմասեանները, Շրջանային Սկաուտ. Խորհուրդի եւ բանակաւայրի յանձնախումբի ներկայացուցիչներն ու այլ հիւրեր:

Պէտք է ընդգծել, որ Հ.Մ.Ը.Մ.ի բանակաւայրը իրականութիւն դարձաւ համեստ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Երուանդ Սիսեանի Հ.Մ.Ը.Մ.ին ժառանգած կտակին շնորհիւ: Հանգուցեալ եղբայրը հաւատարմով հայ երիտասարդութեան առողջ դաստիարակութիւն ջամբելու անհրաժեշտութեան, Հ.Մ.Ը.Մ.ին կտակած էր իր ամբողջ ունեցուածքը, որպէսզի ան օգտագործուի Հ.Մ.Ը.Մ.ի հոգածութեան յանձնուած երիտասարդութեան համախմբման եւ հայեցի դաստիարակութեան աշխատանքներուն համար:

Շրջանային Վարչութիւնը բարձր գնահատելով կտակարար եղբոր այս քայլը, Հ.Մ.Ը.Մ.ի Թեքոյա բանակաւայրը նուիրեց իր անմառ յիշատակին:

Բանակաւայրին կեդրոնը գետեղուած, բանակաւայրի շապիկով փաթեթուած եւ համապատասխան արձանագրութիւնը կրող յուշատախտակին բացումը Հ.Մ.Ը.Մ.ական յատուկ արարողութեամբ տեղի ունեցաւ առաւօտեան ժամը 11.30ին:



Յուշատախտակին վրայ գետեղուած շապիկը հանգամանորէն վերցուց բանակաւայրի յանձնախումբի մօտ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Պերճ Պետոյեան եւ գայն յանձնեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սթիւ Արթինեանին:

Ապա, շնորհաւորելով Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, ան ընդգծեց բանակաւայրին կարեւորութիւնը եւ բարձր գնահատեց հանգուցեալ եղբ. Սիսեանի եւ անոր նմաններու Հ.Մ.Ը.Մ.ին հանդէպ ցուցաբերած նուիրումն ու հաւատքը, որոնց կարեւոր արդիւնքներէն մէկն է բանակաւայրին իրականացումը:

Այնուհետեւ, խօսքը ներկաներուն եւ յատկապէս տարագաւոր արի-արեւոյշներուն ուղղելով եղբ. Պետոյեան ըսաւ. «Այս բանակաւայրով մեր բոլորին երկար տարիներու երազը իրականութիւն դարձաւ: Դուք վայելեցիք այս գեղեցիկ բանակաւայրին բացումը: Դուք ձեր մասնաճիւղային բանակումներով վայելեցիք այս հրաշայիթը: Աւելին, 600է աւելի քոյր-եղբայրներով համախմբուեցաք սեփական ձեր տունը եւ բնութեան այս գեղեցիկ անկիւնը ունեցաք ձեր ընդհանուր բանակումը: Ի՛նչ քաղցր է սեփական բանակաւայր ունենալը: Բախտաւոր էք: Շարունակեցէք միութենական ձեր գործունէութիւնը եւ համախմբեցէք հայ երիտասարդութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս:

«Ես համոզուած եմ, որ այս բանակաւայրը կարեւոր հանգրուան մը պիտի հանդիսանայ մեր ապագայ ղեկավար

րուծիչներ հանդիսացող երիտասարդներուն, որոնք իբրև տիպար քաղաքացիներ պիտի կատարեն իրենց վստահուած պարտականութիւնները»:

Յուշատախտակին բացման տպաւորիչ արարողութիւնը ուրախ միջնորդութիւնը մը ստեղծեց ներկաներուն մօտ, որոնք երկարաշունչ ծափողջոյններով ողջունեցին զայն:

Կէսօրուան ճաշի հիւրասիրութեանէն ետք, գործադրուեցաւ օրուան երկրորդ կարեւոր ծրագիրը՝ Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ գործունէութեան արժեւորումն ու ներկայ պահանջները քննող հանդիպումը:

Նիւթը ներկայացուց Երջանային Վարչութեան ատենադպրուհի քոյր Մարօ Քէշիշեան, որ ընդգծելով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնական նպատակները, անդրադարձաւ անոր գործունէութեան զանազան հանգրուաններուն:-

Ա. Ստեղծման պայմանները եւ քառամեայ գործունէութիւնը (1918-1922), ընդգծելով Հայկական Յեղասպանութենէն ետք հայ երիտասարդութիւնը համախմբելու եւ անոր յոյս ներշնչելու առաքելութիւնը:

Բ. Մեծ Եղեռնէն ետք հայ ժողովուրդի հետ գաղթական դարձած Հ.Մ.Ը.Մ.ի վերածաղկումը հետզհետէ կազմաւորող հայկական գաղութներուն մէջ:

Գ. Համաշխարհային Բ. պատերազմի եւ այնուհետեւ 1960ական թուականներուն արարական աշխարհի քաղաքական իրադարձութիւններուն հետեւանքով հայկական նոր գաղթները Միջին Արեւելքէն դէպի Մ. Նահանգներ, Գանատա եւ Աւստրալիա, ուր կը հիմնեն Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղեր:

Դ. 1974ին Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցի ստեղծումը:

Ե. Հայաստանի անկախութենէն ետք Հ.Մ.Ը.Մ.ի վերընձիւղումը Հայրենիքի մէջ:

Զ. Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի պետական ճանաչումը:

«90 տարիներ Հ.Մ.Ը.Մ.ը գոյատեւեց, որովհետեւ յստակ նպատակներ ունէր: Մենք բոլորս զանազան երկիրներէ եկանք, մեզի հետ բերինք մեր սովորութիւնները, մեր կենցաղը, ապրելակերպը: Բնական է երբեմն ունեցանք անհասկա-



ցողութիւններ, սակայն մեր ետը զոհեցինք միութեան համար, անոր սրբազան նպատակներուն համար, մեր Եռագոյն դրօշին համար:

«Մեր ծնողներու սերունդը կեանքի դժուարութիւններ ապրեցաւ, բայց դիմացաւ: Մեր պայմանները աւելի դիւրացան եւ մենք համակերպեցանք տեղական պայմաններուն: Այսօր դարը փոխուած է: Կեանքի պայմանները բարելաւուած եւ դիւրացած են: Դրական պայմաններ ստեղծուած են եւ զրկանք գոյութիւն չունի: Մեր մարզիկները լաւագոյն տարագնեցող կը ներկայանան մարզադաշտ, իսկ մեր սկաուտները փայտ վառելու պէտք չունին՝ բանակումին ճաշ եփելու համար: Մեզի կը մնայ օգտուիլ կեանքի բարիքներէն, եւ իբրև մտահոգ Հ.Մ.Ը.Մ.ականներ, մեր հոգածութեան յանձնուած սերունդները հայօրէն դաստիարակենք, որպէսզի առողջ սերունդներ պարգեւենք մեր աղօքին», եզրակացուց քոյր Քէշիշեան:

Այնուհետեւ տեղի ունեցան կարծիքներու փոխանակումներ, Հ.Մ.Ը.Մ.ի յաջորդ տասնամեակը ինչպէս դիմագրաւելու նիւթին շուրջ: Հետեւեալ կարեւոր կէտերը ուշադրութեան յանձնուեցան:-

- Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը պէտք է կեդրոններով օժտուին:

- Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչութիւնը լայնօրէն կատարել:

Օրուան վերջին ծրագրով, քոյր Պայծառ Թովմասեան, Գալիֆորնիոյ Նահանգային Խորհուրդին կողմէ հռչակագիր մը յանձնեց Երջանային Վարչութեան, առ ի գնահատանք շրջանի երիտասարդութեան մատուցած իր ծառայութիւններուն:

Օրուան ծրագիրները իրենց աւարտին հասան երեկոյեան ժամը 5ին: Մասնակիցները գոհունակութեամբ մեկնեցան տուն, Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն կառչած մնալու համոզումով:





«Շաւարշ Քրիսեան» արի-արեւոյշ միաւորի անդամներ

**Րաֆֆի Սիլվահեան
ՀԱԼԷՊ**

Տարիներու սովորութեան համաձայն, Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի գալլիկներն ու արժուիկները, արիներն ու արեւոյշները, երէցներն ու պարմանները իրենց տարեկան բանակումները կատարեցին Քեսապի եւ Եագուպիէի բանակավայրերուն մէջ: Բանակումները տեղի ունեցան հինգ հանգրուանով. առաջին չորս բանակումները տեղի ունեցան Քեսապի հայահոծ գիւղերէն էփրօզուխի բանակավայրին մէջ, իսկ հինգերորդ բանակումը կատարուեցաւ Եագուպիէի մէջ: Հինգ բանակումներն ալ նուիրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 90ամեակին եւ կոչուեցան Հ.Մ.Ը.Մ.ականներու անուններով:

Այսպէս, «Շաւարշ Քրիսեան» արի-արեւոյշ միաւորները իրենց բանակումը կատարեցին 27 Յուլիսէն 3 Օգոստոս

2008, 75 քոյր-եղբայրներով: Բանակումին անունն էր «Շաւարշ Քրիսեան», պատասխանատուն էր խմբապետ եղբ. Աբիկ Խաչոյեան, իսկ փոխ պատասխանատուն՝ վարիչ առաջնորդ քոյր Նանօր Գապաքեան: «Շաւարշ Քրիսեան» գալլիկ-արժուիկ միաւորներու բանակումը տեղի ունեցաւ 4-10 Օգոստոս 2008, 132 քոյր-եղբայրներով: Բանակումին անունն էր «Վահան Չերազ» բանակում, պատասխանատուն էր փոխ խմբապետուհի քոյր Կասիա Կարապետեան, իսկ փոխ պատասխանատուն էր եղբ. Յովիկ Հապէշեան: Մասնաճիւղի երրորդ բանակումն էր «Գրիգոր Յակոբեան» գալլիկ-արժուիկ միաւորներու «Պետրոս Ատրունի» բանակումը, 11-17 Օգոստոս 2008, մասնակցութեամբ 144 քոյր-եղբայրներու: Բանակումին պատասխանատուն էր փոխ խմբապետ եղբ. Գէորգ Սարգիսեան, փոխ պատասխանատու ունենալով փոխ խմբապետուհի քոյր Նայիրի Զաքոյեանը: Քեսապի մէջ կատարուած վերջին բանա-

կումն էր «Գրիգոր Յակոբեան» արի-արեւոյշ միաւորներուն բանակումը, 76 քոյր-եղբայրներով: Բանակումին պատասխանատուն էր խմբապետ եղբ. Րաֆֆի Սիլվահեան, իսկ փոխ պատասխանատուն էր վարիչ առաջնորդ քոյր Թալին Յովհաննէսեան: Բանակումին անունն էր «Վարդան Բախշեան» բանակում: Խմբակներու անունները կոչուած էին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր սերունդի անդամներու անուններով, իսկ իւրաքանչիւր օր նուիրուած էր Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան եւ Հայաստանի անկախութեան 90ամեակներուն, Արցախեան պահանջատիրութեան 20ամեակին, Լիզպոնի գործողութեան 25ամեակին, Պերլինի վեհաժողովի 130ամեակին եւ քրիստոնէական դաստիարակութեան տարուան:

2008ի բանակումները կատարուեցան միաւորներու խմբապետութեան կողմէ պատրաստուած ծրագիրներով, որոնք կ'իրագործուէին ամենայն բժախնդրութեամբ: Առաւօտեան ըս-

կառուտական մարզանքները, հիւր դասախօսներու կողմէ արդիական միջոցներով մատուցուած դասախօսութիւնները, չարքաշուծեան խաղերը, հետախուզական արշաւները, գիշերային գործունէութիւններն ու խրախճանքները, երգի ուսուցումներն ու հարց-պատասխանները, սկառուտներուն հոգեհարազատ գրոյցի նիւթերը, մինչեւ իսկ նախքան ճաշելը՝ բարձրաձայն աղօթելը, մէկ սեղանի շուրջ սեղանակիցներ դառնալը, լուսցուելը, քնանալը, բանակավայրը մաքրելն ու պաշտպանելը իրենց «համն ու հոտը» ունէին: Դաստիարակչական ծրագիրը կեդրոնացած էր սկառուտական, աղգային եւ համամարդկային հարցերու վրայ: Բանակումներու ընթացքին, բանակողներուն բաժնուեցան յատուկ թղթապանակներ, քաղաքներ եւ գլխարկներ: Բանակումներու ամէնէն հաճելի բաժինները գիշերային խրախճանքներն էին: Ամէն երեկոյ բանակողները խարոյկին շուրջ հաւաքուած՝ կը կատարէին զաւեշտներ, ազգային-յեղափոխական երգեր եւ սկառուտական կանչեր: Բանակումներու փակման խարուկահանդէսներուն անոնք իրենց լաւագոյնը ներկայացուցին իրենց ծնողներուն:

17 Օգոստոս 2008ին, Քեսապի էքզիզոլուի բանակավայրին մէջ տեղի ունեցաւ ընդհանուր խարուկահանդէս, ներկայութեամբ Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի, Ազգային իշխանութեան եւ քաղաքական ժողովի ներկայացուցիչներու, Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Շրջանային Սկառուտ Խորհուրդի անդամներու, Հայէպի մասնաճիւղի գոյգ վարչութիւններու անդամներու եւ հարիւրաւոր ծնողներու ու Հ.Մ.Ը.Մ.ականներու: Խարուկահանդէսին պատրաստուած էր գեղարուեստական ճոխ յայտագիր, որ ընդգրկեց սկառուտական դանադան խաղեր, զաւեշտներ, հայկական, արաբական եւ օտար պարեր: Տեղի ունեցաւ աստիճանատուէրութիւն եւ վկայականաց բաշխում: Շրջանային Սկառուտ Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան շնորհաւորեց ներկաները միութեան 90ամեակին առիթով եւ յայտնեց, թէ այսօր իր անցեալով հպարտ Հ.Մ.Ը.Մ.ը կու գայ ըսելու, թէ



90 տարի հանգրուան մըն է միայն անցեալի երկար ճամբուն վրայ, 90ամեայ անկախացած Հայաստանը այսօր աւելի հզօր է իր 90ամեայ Հ.Մ.Ը.Մ.ով, որ յանուն հայրենքի փրկութեան նուիրած է ու կը շարունակէ նուիրել իր ամէնէն արժանաւոր զաւակները՝ Շաւարշ Քրիսեանէն մինչեւ Վարդան Բախշեան եւ ուրիշներ:

Ապա, խօսք առաւ Հայէպի մասնաճիւղի խմբապետ եղբ. Աւետիս Տէրվիշեան եւ փոխանցեց մասնաճիւղի ըՍկառուտ Խորհուրդին խօսքը, ըսելով, թէ Հայէպի մասնաճիւղի 2008ի բանակումները նուիրուած են միութեան 90ամեակին: Այն միութեան, որ անցնող 90 տարիներուն հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ ինքզինք արձանագրեց իբրեւ հայակերտման բերդ, ազգապահպանման պարիսպ ու հայ նոր սերունդները մարդկային ու մանաւանդ աղգային դաստիարակութեամբ թրծող կրթարան: Հ.Մ.Ը.Մ.ը «Բարձրացիր՝ բարձրացուր» նշանաբանով է ու կը մընայ առաջատարը մեր համազգային սկզբունքներուն: Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակի սեմին մեր պարտքն է մեր ուխտը նորոգել՝ մնալու Հ.Մ.Ը.Մ.ի անսակարկ ծառայողներ եւ անձնուրաց նուիրեալներ:

Մասնաճիւղի երէց եւ պարման միաւորները, երկրորդ տարին ըլլալով, իրենց բանակումը կատարեցին Եագուպիէի բանակավայրին մէջ, 36 անդամներով: Բանակումին պատասխանատուն էր եղբ. Գէորգ Գունտաքճեան, փոխ պատասխանատուն՝ քոյր Ազնիւ Մանգուշեան: Եագուպիէի մէջ տեղի ունեցաւ նաեւ Ս. Աննայի տօնակատար

ութիւնը: Այս առիթով, մասնաճիւղին երէց եւ պարման միաւորները շեփորախումբի ընկերակցութեամբ տողանցեցին բանակավայրէն մինչեւ Ս. Աննա եկեղեցի, ուր տեղի ունեցաւ տօնակատարութիւն: Երեկոյեան, Եագուպիէի մէջ, բանակողները կատարեցին իրենց խարուկահանդէսը: Գեղարուեստական յայտագրի աւարտին, Հայէպի մասնաճիւղի Սկառուտ Խորհուրդի ատենապետ եղբ. Պօղոս Պալեոգեան շնորհաւորեց բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները: Ան իր խօսքին մէջ ըսաւ, որ երբ Պոլսոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ը կը պատրաստուէր ծնունդ առնել, Սարգարապատէն ու Բաշ Ապարանէն ձայն մը հնչեց: Այդ ձայնը 600 տարուան ստրկութեան եւ անիշխանութեան վերջ դնող Մայիս 28ով կերտուած Հայաստանի Ա. Հանրապետութիւնն էր, որուն 90ամեակը կ'ոգեկոչենք այս տարի: Այս պատճառով մեր բանակումներու յայտագիրներուն միջոցով Գրիգոր Յակոբեանի ու Շաւարշ Քրիսեանի կողքին՝ Արամ Մանուկեանն ու Նիկոլ Աղբալեանը, Անդրանիկն ու Դրօն, Սարգարապատն ու Ղարաքիլիսան ամէնօրեայ ներկայութիւն են:

Խարուկահանդէսի աւարտին յաջորդեց ցտեսութեան պահը եւ բանակողները բանակավայրէն մեկնեցան կրկին հանդիպելու խոստումով:

«ՄԱՐՁԻԿ»՝ ԻՆ ԿԸ ՆՈՒՐԵՆ
♦ Եղբ. ճորճ Տաքետեան (Ամման)
300\$



Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿ ԱՄԵԼՈՅԻ ՄԷՋ



Թղթակից ԱԼՄԵԼՕ

ՀՄԸՄ-ի Արմելոյի մասնաճյուղի վարչութիւնը միութեան հիմնադրութեան 90ամեակին առիթով կազմակերպեց մարզական եւ սկաուտական ձեռնարկ մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 11 Հոկտեմբեր 2008ին:

Հանդիսութեան բացումը կատարեցաւ Հոլանտայի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ Տաթև Վարդապետ Յակոբեանի Տէրունական Աղօթքով եւ «Մեր Հայրենիք» քայլերգի երգեցողութեամբ:

Այնուհետեւ, մասնաճյուղին սկաուտական եւ մարզական խումբեր տողանցեցին «Յառաջ նահատակ» քայլերգով:

Մասնաճյուղի վարչութեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետուհի քոյր Յասմիկ Օհանեան, որ շեշտը դրաւ ՀՄԸՄ-ի հիմնադրութեան եւ նպատակներուն վրայ. քոյրը անդրադարձաւ նաեւ ՀՄԸՄ-ի կառույցին:

Իսկ տեղւոյն լեզուով խօսք առաւ վարչական եղբ. Վարդան Պօղոսեան:

Սկաուտ. Խորհուրդի կողմէ արտայայտուելու հրաւիրուեցաւ եղբ. Սեան Կորկիսեան, որ ներկայացուց յատկապէս Արմելոյի մասնաճյուղին սկաուտական եւ մարզական կեանքը:

Ապա, Հայր Տաթև Յակոբեան փոխանցեց իր օրհնութիւնը:

Հանդիսութեան երկրորդ մասը յատկացուած էր սկաուտական երգման արարողութեան: 5 գայլիկներ եւ 6 արիարենոյշներ կատարեցին իրենց խոստումը: Ներկայացուեցան նաեւ սկաուտական դանաղան խաղեր:

Յայտագրին մարզական բաժինը



կ'ընդգրկէր մրցումներ՝ Փուլթպոլի, պասքէթի եւ փինկ-փոնկի:

Մարզական միջնորդութիւն մէջ տեղի ունեցան բոլոր խաղերը:

90ԱՄԵԱԿԻ ՊԱՐԱՅԱՆԴԵՍ

Նոյն օրը, երեկոյեան, տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ի հիմնադրութեան 90ամեակին նուիրուած պարահանդէսը, Արմելոյի Հայ Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ, ներկայութեամբ աւելի քան 350 հայորդիներու:

Վարչութիւնը իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Սկաուտ. Խորհուրդին եւ Տիկնանց Յանձնախումբին՝ իրենց ցուցաբերած օժանդակութեան համար: Փոխանցուեցան նաեւ յուշանրէրներ: Այնուհետեւ, Տէր Խաչատուր Ա. Քահանայ Ֆրէնքեան ներկայութեան փոխանցեց իր օրհնութեան խօսքը:

Մարզիկներ, սկաուտներ, համակիրներ եւ ՀՄԸՄ-ի բարեկամներ մինչեւ ուշ գիշեր ժողովրդային ու ազգային երգերով հաճելի ժամեր անցուցին միասնաբար:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԱՍՆԱԾԻՂԸ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ ՊՄԱԿԵՑ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԻՐ 39ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ (ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԻՆ)



Յարուժ Պաղամեան ԵՐՈՒՍԱՂԷՄ

Աւելի քան 65 դասարաններ են սկսում շրջանի երեք մասնաճյուղերին՝ Երուսաղեմին, Հայֆային եւ Եսֆային, հաշվառված է Երուսաղեմի մասնաճյուղի սկսած 39րդ բանակումը, նույնպես՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրված եւ Հայաստանի Հանրապետության հռչակման 90ամեակին:

Վեցորեայ բանակումին ընթացքին, որ տեղի ունեցաւ 17-23 Օգոստոս 2008ին, մասնակիցները ապրեցան Հ.Մ.Ը.Մ.ավալել միջնորդի մէջ, սորվելով ըլլալ չարքաչ, աշխատասէր եւ հաւատարիմ՝ սկսած սկսած դաւանանքին: Սկսած «Միշտ պատրաստ» եւ միութեան «Բարձրացիր-բարձրացուր» ուղեցոյց եղան բոլոր մասնակիցներուն:

Բանակումին ընթացքին, ութ խումբերու բաժնուած դասարանները եւ սկսածները, որոնք կը կրէին պատմա-

կան Հայաստանի վայրերու եւ ազգային գործիչներու անուններ, առիթը ունեցան մասնակցելու դաւանական մրցումներու, որոնց միջոցով անոնք սորվեցան աշխատել խումբերու մէջ՝ ստանալով դաւանական գիտելիքներ, ցոյց տալով անհատական թէ խմբային ձեւեր, փորձելով ֆիզիքապէս եւ մտապէս ըլլալ լաւագոյնը:

Բանակումը իր աւարտին հասաւ պաշտօնական փակման հանդիսութեամբ, որ տեղի ունեցաւ Ուրբաթ, 22 Օգոստոս 2008ի երեկոյեան, ներկայութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղեմի մասնաճյուղի ատենապետ եղբ. Սերոբ Սահակեանի եւ վարչական կազմի, Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի եւ Եսֆայի վարչութիւններու ներկայացուցիչներու եւ բազմաթիւ անդամներու ու համակիրներու:

Փակման հանդիսութիւնը սկսաւ եղբ. Յարութ Պաղամեանի բացման խօսքով: Ապա տեղի ունեցաւ վեցորեայ մրցումներուն վերջին փուլը, ուր երկուքական գայլիկներ եւ սկսածները մրցեցան առաջնութեան համար: Յաղթական դուրս եկան եղբայրներ Գրիգոր

Սահակեան (գայլիկ) եւ Աբօ Սահակեան (սկառուտ): Սկսածները ներկայացուցին զոյգ մը ազգային երգեր, իսկ գայլիկները՝ Հայկական Յեղասպանութեան եւ 1918ի անկախութեան նուիրուած կենդանի պատկեր մը: Յաջորդեց Հայաստանի նուիրուած երգ մը:

19 նոր սկսածներու երգման արարողութիւնը կատարուեցաւ՝ կնքահայրութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Երուսաղեմի երիցագոյն անդամ եղբ. Թորոս (Մերոն) Թահմազեանի: Փակման խօսքը կատարեց Երուսաղեմի մասնաճյուղի ատենապետ եղբ. Սերոբ Սահակեան, որ բարձր գնահատեց բանակումին կազմակերպիչներուն գործը: Խօսքին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի եւ սկսածութեան դրօշներուն վար առնումը «Յաւաջ նահատակ»ով: Հայաստանի Եռագոյն դրօշը, որ կը ծածանէր բանակումի բացումին ի վեր, «Մեր Հայրենիք»ով վար առնուեցաւ՝ ձեռամբ եղբ. Մերոնի, որ այս տարի մարտի 29-ին Հ.Մ.Ը.Մ.ի անդամակցութեան իր 70ամեակը: Ապա, Արիս Արք. Շիրվանեանի օրհնութիւններով բանակումը հասաւ աւարտին:



Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ

ՀՄԸՄ-Ֆրանսը իր հիմնադրութեանէն ի վեր գործունէութեան առանցքը նկատած է սկաուտութիւնը, մարզական խումբերու կազմութեան կողքին, որովհետեւ ան հաւատացած է նոր սերունդի դաստիարակութեան գործին կարեւորութեան: Քանի որ սկաուտութիւնը այն մարզն է, ուր փոքր տարիքէն հայկական մթնոլորտի մէջ պղտիկը կը սորվի պարկեշտութիւն, միութենական կեանք եւ կ'ունենայ ընկերային յարաբերութիւն:

ՀՄԸՄ-Ֆրանսը ըլլալով մէկ մասնաճիւղը ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքին, միութեան հիմնադրութեան 90ամեակին առիթով, մտածումը ունեցաւ 90ամեայ պատմական փորձառութեան մը շինիչ մասերը առնելու եւ փոխանցելու նոր սերունդին:

Որովհետեւ, 90ամեայ կեանք կը նշանակէ համագործակցութիւն, համախո-



հուծիւն, մտերմութիւն, բաժնեկցութիւն:

Եւ ՀՄԸՄ-Ֆրանսի վարչութիւնը իր սկաուտներուն ուզեց ընձեռել առիթը՝ գիրար ճանչնալու, իրարմով լիանալու, եղբայրանալու:

Արդ, այս տարի, ան իր տարեկան բանակումին հրաւիրեց տարբեր շրջաններէ սկաուտական խմբակներ: Հրաւերին ընդառաջեցին ՀՄԸՄ-Ալմեյո,

ՀՄԸՄ-Շուէտ, ՀՄԸՄ-ՀԱՍԿ եւ Իրանի Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութիւնը: Ընդհանուր՝ 85 սկաուտ-արեւոյշներ, գայլիկ-արծուիկներ, 7էն 15 Յուլիս 2008ին, Փարիզեան շրջան՝ Ժամպլիլի սկաուտական բանակավայրին մէջ, քանի մը օրերու ընթացքին միասնաբար սորվեցան ո՛չ միայն սկաուտական գիտելիքներ, այլ նաեւ՝ ծանօթացան ազգային կեանքը յուզող հարցերու, ու մանաւանդ ստացան կեանքի դպրոցի գործնական փորձառութիւնը՝ յարգանքը, գիրար օգնելը, համակերպումը, ու նաեւ՝ ուրիշը իր հետ բարձրացնելու ՀՄԸՄ-ի նշանաբանին իմաստը:

Բանակումին խնամուած յայտագիրը պատրաստուած էր նախօրոք: ՀՄԸՄ-Ֆրանսի վարչութիւնը ճիգ էր խնայած կազմակերպելու եւ օժանդակելու բանակումին յաջողութեան՝ կազմակերպչական իմաստով:

Այդ օրերուն փոխանցուած դասախօսութիւնները սկաուտականին կողքին շօշափեցին համամարդկային արեւելումով նիւթեր, ինչպէս՝ տիպար քաղաքացին, ուժանիւթը եւ այժմէական



մտահոգութիւններ պարզող այլ հարցեր:

Բանակումին աշխատանքներուն առընթեր, սկառուտ-արեւոյշներ այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիր երրորդութենէն Գրիգոր Յակոբեանի շիրիմը (Թիէի գերեզմանատուն) ու իրենց յարգանքի տուրքը մատուցեցին, նաեւ՝ Կոմիտասի արձանը (Փարիզ) եւ յիշարժան այլ վայրեր:

Իսկ Կիրակի, 13 Յուլիսին, «Այցելութեան Օր»ը ընթացաւ ընտանեկան միջնորդութիւն մէջ, որուն ընթացքին ծնողներ առիթը ունեցան ամբողջ օր մը սկառուտական միջավայրը վայելելու:

Օրուան պաշտօնական բաժինը կ'ընդգրկէր սկառուտական արարողութիւն, զնահատականներու յանձնում, ապա՝ յուշանուէրներու փոխանակում, շրջաններու շնորհակալական խօսք՝ ուղղուած Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան: Խօսքերով անոնք իրենց գոհունակութիւնը յայտնեցին նման նախաձեռնութեան մը համար, շեշտելով անոր շահեկանութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Հրաչ Սիսեռեան: Եղբայրը շնորհաւորեց վարչութիւնը, որ իր ուսերուն վրայ առնելով նման աշխատանքի մը ծանրութիւնը, յաջողեցաւ անգամ մը եւս ծաղկեցնել հայապահպանման այգին, ստեղծելով «փոքրիկ Հայաստան» մը: Եղբ. Սիսեռեան մատնանշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը 90ամեայ փորձառութիւնը ունի Սփիւռքի մէջ կերտելու լաւ հայն ու տիպար քա-



ղաքացին, ու այդ մարզին մէջ յաջողեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսա:

Վարչութեան անունով խօսք ուղղեց ատենապետ եղբ. Լեւոն Պաղտասարեան: Եղբայրը փոխանցեց վարչութեան ունեցած մտայղացումը՝ շրջանները համախմբելու եւ միասնաբար ապրելու միութեան 90ամեայ հպարտութիւնը եւ լիանալու անով:

Տեղին է յիշել, որ բանակավայրը իր ներկայութեամբ պատուած էր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի Թեմի Առաջնորդ Նորվան Արք. Զաքարեան:

Սրբազան Հայրը «Պահպանիչ»ով եւ իր ոգեշունչ խօսքով կատարեց պաշտօնական բաժնի աւարտը:

Նորվան Արք. Զաքարեան Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի հիմնադրութեան օրերու յիշողութեան դիմելով, ներկաներուն փո-

խանցեց, թէ 30 տարի առաջ, երբ նոր մարմին կ'առնէր Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսա ու կը գումարէր իր առաջին ժողովները, այն տպաւորութիւնը ունեցած էր, թէ միութիւնը պիտի սահմանափակուէր ժողովներու ծիրէն ներս ու մնար ինքնամփոփ: Իսկ այսօր ան հրճուանքով կը գտնուի այն փաստին առջեւ, որ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսա ոչ միայն կաղմակերպչական, այլեւ դաստիարակչական լուրջ աշխատանք ծաւալած է: Սրբազանը մատնանշեց, թէ Սփիւռքի համայնքները Հայաստանի կարելիութիւնները չունին, անոնք ղուրկ են պետական կառույց ունենալէ, սակայն Հ.Մ.Ը.Մ.ը իր սկառուտութեամբ կաղմած է Սփիւռքի բանակը, զոր մեծ դեր կը կատարէ: Նորվան Արք. Զաքարեան իր խօսքը փակեց յայտարարելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր ըսկառուտութեամբ կը նկատուի աղբիւն ողնայարը:

Պաշտօնական բաժնին յաջորդեց բոլորին կողմէ սպասուած խորոյկը, որուն բոցերուն շուրջ բանակողները, իւրաքանչիւր շրջան առանձնաբար, ներկայացուցին իրենց պատրաստած յայտագիրը՝ պար, երգ, սկառուտական խաղեր, դաւեշտ, նուագ ու մանաւանդ սկառուտական խանդավառ ու խրախուսիչ միջնորդութիւն:

«Յտեսութիւն մըն է եղբայր, միայն ցտեսութիւն, դարձեալ գիրար կը հանդիպինք ու կ'երգենք միաձայն...»ը բանակողներուն խոստումն էր: Վկայ էին անոնց աչքերը...:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴԻՐՄԱՆ 90ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

1 8-23 Օգոստոս 2008ին, Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Բիւրականի բանակավայրում տեղի ունեցաւ համահայաստանեան ըսկառտական բանակում՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի բոլոր միաւորների սկաուտների մասնակցութեամբ: Այս տարուայ բանակումը նուիրուած էր Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրման 90ամեակին:

Բանակման օրերն անցան բաւակաւնին յազեցած օրակարգով: Սկաուտական գիտելիքներից բացի, մասնակիցները ստացան ընդհանուր զարգացման գիտելիքներ, դասախօսութիւններ լսեցին տարբեր թեմաներով, ինտելեկտուալ եւ մարզական մրցոյթներով կոփեցին միտքն ու մարմինը եւ շուրջօրեայ պահակութեամբ հսկեցին իրենց բանակավայրը: Ինչպէս բոլոր սկաու-

տական բանակումներին, օրուայ աւարտին բոլոր մասնակիցներն հաւաքուում էին խարոյկի շուրջ եւ երգերով ու հումորային ներկայացումներով միմիանց զուարճացնելով՝ լիցքաթափուում:

Բանակման ընթացքում մէկ օր ամբողջութեամբ նուիրուած էր առաջին օգնութեան գիտելիքներին: Հայկական կարմիր Խաչի ընկերութեան կամաւորները սկաուտներին ներկայացրին, թէ ի՞նչ պէտք է անել կոտորուածքների, արեւահարութեան, արիւնահոսութեան դէպքում եւ ի՞նչպէս է պէտք ճիշդ վիրակապել: Նոյն օրը, նախնական պայմանաւորուածութեան համաձայն, բանակավայր այցելեց նաեւ Արագածոտնի թեմից Տէր Գրիգորը, որը սիրով գրուցեց եւ պատասխանեց սկաուտների հարցերին:

Գիւմրիի «Պիո-Սոֆիա» հասարակական կազմակերպութիւնից հրաւիրուած անդամներն երկու սեմինար անցկացրեցին անտառի նշանակութեան եւ աննդային յաւերանիւթերի, օրկանիգմում դրանց աղբեցութեան մասին: Սեմինարին յաջորդեց նաեւ Փիլմի դիտումն ու քննարկումը: Խմբապետական Խորհրդի հրաւերով բանակավայր այցելեց եւ Լիդայոնի հինգ տղոց մասին դասախօսութիւն ներկայացրեց Սիմոն Գաֆայեանը: Անակնկալ այցով բանակավայրում եղաւ նաեւ այդ օրերին Հայաստանում գտնուող հեծեալները եղբայր Վաչէ Սողոմոնեանը:

Բանակման ամենափոքրիկ մասնակիցների՝ գայլիկների առօրեան նոյնպէս անցնում էր յազեցած առօրեայով: Գայլիկական գիտելիքներից բացի, օրակարգը լի էր ընդհանուր զարգացման գիտելիքներով, զուարճայի եւ ուսուցողական խաղերով, մարզական մրցոյթներով: Բանակման ընթացքում գայլիկպատասխանատուները կազմակերպեցին քայլարշաւ դէպի մօտակայ անտառը, որտեղ գայլիկները սովորեցին, թէ ի՞նչպէս պէտք է վրան լարել եւ հաւաքել: Գայլիկպատասխանատուները չէին մոռացել նաեւ վոհմակի սիրելի մուլտֆիլմերի մասին, որոնց յաջորդում էին աշխոյժ քննարկումները մուլտհերոսների վերաբերեալ: Բանակման պաշտօնական փակման արարողութեան ժամանակ տեղի ունեցաւ փոխանցման արարողութիւն եւ տասներեք արծուիկ-գայլիկներ համայնեցին արիարենոյնների շարքերը: Յայտարարուեցին լաւագոյն գայլիկի, արծուիկի, վարիչ վեցակապետի անուններն ու յանձնուեցին գնահատագրեր:

Սկաուտներից բացի, բանակմանը մասնակցելու էին հրաւիրուել նաեւ երեխաներ այլ հասարակական կազմակերպութիւններից: Հայաստանի տարբեր մարզերից ժամանած հիւրերը թէեւ նախկինում ծանօթ չէին եղել սկաուտական շարժմանը, այդուհանդերձ, ըսկաուտների հետ խմբակներ կազմեցին եւ մասնակցեցին ամբողջ ծրագրին:

ԷԶՄԻԱԾՆԻ «ՎԱՋԷ» ՄԻԱԲՈՐԻ 15ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ԷԶՄԻԱԾԻՆ



ԷՎիաժնի «Վաջէ» միաւորի 15ամեակին նուիրուած բանակումը տեղի ունեցաւ Օգոստոսի 5-10ը Ապարանի Լուսազիւղ գիւղում: Բանակմանը մասնակցեցին ընդհանուր թուով 44 հոգի: Բանակումի նպատակն էր սկաուտներին դաստիարակել հայրենասիրական ոգով, ծանօթացնել հայրենի բնութեանն ու սովորեցնել դժուարութիւններ յաղթահարել:

Բանակումն անցաւ նախապէս կազմած օրակարգի համաձայն: Դասախօսութիւններից ու ձեռնարկի աշխատանքներից բացի կազմակերպուեց երկու արշաւ. առաջինը դէպի Թուրք Մանուկ եկեղեցի, երկրորդը՝ մօտակալ ճորրը, որտեղ անցկացւեց դասախօսութիւն՝ «Առաջին բուժ-օգնութեան հիմունքներ»

ըր» թեմայով: Փակման արարողութիւնից առաջ կազմակերպուեց երգման արարողութիւն, որի ընթացքում 22 մասնակիցներ երգում տուեցին:

Բանակման վերջին օրը սկաուտներն այցելեցին հարեան բանակավայր, ուր անցկացուած էր միջազգային սիմպոզիում մի խումբ արուեստագէտների մասնակցութեամբ: Բանակումի կազմակերպիչների խնդրանքով, արուեստագէտները արուեստի վերաբերեալ

դասախօսութիւն կարգացին սկաուտների համար:

Բանակման յաջող ընթացքին նպաստեց նաեւ օժանդակ կազմը, որոնք ակտիւ մասնակցութիւն ունեցան ցախհաւաքի եւ խարուկահանդէսի նախապատրաստման աշխատանքներում:



Hratch and Neshan Boyadjian

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>



ՈՐՊԵՍՁԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԻՐԵՆՑ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԹԸ



Ամպրոպ ՊԵՅՐՈՒԹ

ՀՄԸՄ-ի պասքեթպոլի աղջկանց ներկայացուցչական խումբը (Անթիլիաս) 2007-2008 տարեշրջանին առաջին քայլերը առաւ՝ ՀՄԸՄ-ին վերագործնելու երբեմնի փառքի օրերը: Հակառակ իրենց փոքր տարիքին (միջին տարիք՝ 22 տարեկան) եւ անփորձութեան՝ մեր աղջիկները-

● Տիրացան Լիբանանի փոխ ախոյեանի տիտղոսին: ՀՄԸՄ-ի փլեյ-մէյթըր Սանտրա Նաժմ Հանդիսացաւ տարեշրջանի կոլ-սքորըր՝ իւրաքանչիւր մրցումի միջին հաշուով նշանակելով 20.55 կէտ:

● Տիրացան Լիբանանի բաժակի երկրորդութեան տիտղոսին, ուր կիսաւարտականին, «Ռիատի»ի դէմ մրցումին մեծ իրագործում կատարեցին, երբ «Անդրանիկ»ի դաշտին վրայ, «Ռիատի»ի նման փորձառու եւ հզօր կադմբ պարտութեան մատնեցին 39-82 արդիւնքով (43 կէտի տարբերութեամբ):

● Տիրացան Լիբանանի տարիքային ախոյեանութեան տիտղոսին:

● Հուսամմէտտին Հարիրի միջազգային մրցաշարքին, յաղթեյէ ետք Յորդանանի ախոյեան «Օրթոտոքսի»ին (68-65) եւ Եգիպտոսի ախոյեան «Ահլի»ին (70-57), հասան աւարտական հանգրուան, ուր պարտուեցան «Անդրանիկ»էն (64-91):

Այս մրցաշարքին Սանտրա Նաժմ ընտրուեցաւ մրցաշարքի յաւազոյն մարզիկուհի:

● Gam3 Streetball competitionի մրցաշարքին, որ տեղի ունեցաւ 4-11 Օգոստոս 2008ին, Քոփենհագենի մէջ (Դանիա), ՀՄԸՄ Անթիլիաս մասնակցեցաւ երեք մարզիկուհիներով: Այլք Թապաքեան, Նաթալի Սվաճեան եւ Սանտրա Նաժմ: Խումբը հասաւ աւարտական հանգրուան, ինչ որ պատուաբեր արդիւնք կը նկատուի՝ նկատի ունենալով մրցաշարքին միջազգային ընդթը:

Վերոյիշեալ յաջողութիւններուն մէջ իրենց նպաստը ունեցան երեք ազգակներ. պասքեթպոլի յանձնախումբը, ՀՄԸՄ-ի աղջիկներ եւ համակիրներ:

Պասքեթպոլի յանձնախումբը գործը ստանձնած առաջին օրէն կը գտնուէր նիւթական շատ ծանր պայմաններու մէջ. ուղղակի զգալի էր հովանաւորներու եւ նուիրատուներու պակասը: Բայց յանձնախումբի անդամները յամաւորէն շարունակեցին իրենց աշխատանքը եւ պէտք է ըսել, որ անսակարկ ծառայեցին խումբին՝ ՀՄԸՄ-ականի բարձր գիտակցութեամբ: Անոնք յաճախ իրենց սեփական նիւթական միջոցներն ալ գործածեցին՝ ի խնդիր խումբին յաջողութեան: Նաեւ, 8 Օգոստոս 2008ին, յանձնախումբը կազմակերպեց իր տարեկան ընթրիք-խրախճանքը, որուն ճոխ երգերով իր մասնակցութիւնը բերաւ Հրաչ Կաթակեան՝ ստեղծելով հայկական ջերմ եւ ուրախ մթնոլորտ: Զեռնարկը նիւթաբարոյա-

կան շօշափելի արդիւնք տուաւ:

Իսկ Հ.Մ.Ը.Մ-ի աղջիկները յաղթանակ կերտելու համար անդուլ պայքար մղեցին: Երբեմն պայքարեցան իրենցմէ շատ անելի փորձառու եւ երկարահասակ աղջիկներու դէմ, սակայն շնորհիւ իրենց հետեւողական մարզումներուն եւ հնարամտութեան, անոնք յաջողեցան շրջանցել բոլոր դժուարութիւնները: Խումբին մաս կազմեցին Ալիք Թապաքեան (խմբապետ), Նաթալի Սփանեան, Սանան Մարգարեան, Սանտրա Նաթրմ, Գարօլին Մուֆարէժ, Յոլինէ Գաղանճեան, Լէյլա Ֆարէս, Քրիստին Մուֆարէժ, Նայրի Ոսկերիչեան, Քրիստին Նաճարեան, Միրա Ռիզք, Նարսո Յարուլթիւնեան, Նարէ Թերզեան եւ Մեղրի Փափազեան:

Հապա մեր համակիրնե՞րը, Հ.Մ.Ը.Մ-ի աննման համակիրները, անոնք միշտ ընկերացան խումբին եւ մարդկան ոգիով ու անխոնջ կերպով քաջալերեցին աղջիկները. աղգային-յեղափոխական երգերով եւ երբեմն ալ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին մասնակցութեամբ, դաշտերուն մէջ անոնք ստեղծեցին տօնական մթնոլորտ:

2008-2009 տարեշրջանին համար.-
 -Պասքեթպոլի յանձնախումբէն կը սպասուի վերանորոգ վճռականութեամբ շարունակել կազմակերպչական, յարբերական եւ քարոզչական գործը:
 -Մարզիչէն կը յուսանք խումբը առաջնորդել խելացի մարտավարութեամբ եւ իմաստուն ցուցմունքներով:



-Մարզիկուհիներէն կ'ակնկալուի ներկայացնել գեղեցիկ մրցումներ եւ խումբը տանիլ յաղթանակէ յաղթանակ:
 -Համակիրները, իրենց շարքերը բաղմացնելով, պէտք է յաւելեալ խանդավառութեամբ եւ մարդկան ոգիով քաջալերեն խումբը՝ միշտ հաւատարիմ մնալով Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանին:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
 Tastefully decorated 36 rooms
 and 6 suites with individual
 heating / air conditioning,
 direct access telephone line,
 internet connection, minibar,
 safety box and satellite TV.
 Private bathroom with hairdryer.

The suites can accommodate
 3 adults or a family
 with parents and 2 children.

PAVILLON MONCEAU

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
 Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
 infos@pavillon-monceau.com
 www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿՈՐԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԱՐԱՐԱՏԻ ԳԱԳԱԹԻՆ



Կորին Հայրապետեան ծնած է 1942ին, Իրանի Ատրպատական նահանգի Միանե քաղաքը: Ընտանիքին հետ Թեհրան տեղափոխուելով, 1958ին, ան անդամակցած է Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան: Մասնակցած է կազմակերպութեան սկաուտական աշխատանքներուն եւ հետագային դարձած է խմբապետ եւ պատասխանատու: Այս, ան եղած է մարզական բաժնի վարչական եւ լեռնագնացութեան պատասխանատու:

Լեռնագնաց ընկերներուն հետ, Կորին Հայրապետեան բարձրացած է Իրանի զանազան լեռնագագաթները. Ալամ Քուհ (4659 մ.), Սահանտ (3712 մ.), Սապալան (4821 մ.) եւ այլն: Իրանի ծմբան լեռնարշաւի առաջին լեռնագնացներէն մէկը եղած է ան՝ բարձրանալով Էլպուրզ լեռնաշղթայի Դամաւանդ գագաթը (5678 մ.):

Այժմ ան կը բնակի Մ. Նահանգներու Սան Ֆրանսիսքո քաղաքը եւ 1980էն ի վեր կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ին: Տարիներ եղած է Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի ատենապետ:

9 Սեպտեմբեր 2008ին ան իրականացուց իր մեծ երազը, երբ խումբ մը լեռնագնացներու հետ բարձրացաւ Արարատ լեռ: Լեռնագնացներէն երկուքը միայն յաջողեցան հասնիլ գագաթ: Ինք մէկն էր անոնցմէ:

Ստորեւ՝ գագաթ բարձրացման հետաքրքրական ժամանակագրութիւնը.-

ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ

Երեւան, 6 Սեպտեմբեր 2008:

Առաւօտեան 5.30ին ճանապարհուեցինք դէպի Թուրքիա-Հին Պայազէտ: Խմբի ղեկավար՝ Տիգրան Բաբայեան: Ճանապարհորդներ՝ Կորին Հայրապետեան, Վաչիկ Զաքարեան, Սերոժ Սուքիասեան, Գէորգ Աբգարեան եւ Ռաֆիկ Միմոնեան: Վարորդ՝ Վարդան Սամսոնեան:

Երեւան-Գիւմրի-Ախալքալաք-Ախալցխա-Իգատի-Հին Պայազէտ:

Տեղ հասանք Երեկոյեան 7.30ին (ժամանակացոյցը Երեւանի ժամանակով): Մեղ սպասում էին «Սպահան» նորակառոյց հիւրանոցում, ուր իջեւանում են լեռնագնացները:

Ընթրիքի ժամանակ ծանօթանում ենք կազմակերպող կողմին՝ Մուսթաֆա Արսինին, ուղեկցող Զաքին եւ խոհարար Ահմէտին:

7 ՍԵՊՏ. 2008

Ժամը 6.30 նախաճաշ հիւրանոցում: 7.10-7.30 ուղեկցողները գնեցին թարմ հաց ու բանջարեղէն շուկայից եւ մեկնեցինք դէպի Արարատ լեռ:

9.05 աւտոբուսը «Ford Tranzit» մեղ հասցրեց լեռան ստորոտը՝ 2150 մ.:

9.20 սկսեցինք վերելքը՝ 2150 մեթրից:

Առջեկից քայլում էր առաջնորդը՝ քիւրտ Զաքին, այնուհետեւ խումբը, իսկ վերջում Տիգրանը:

10.00 2300 մ. առաջին կարճատեւ կանգառը:

11.10 2660 մ. երկրորդ կարճատեւ կանգառը:

11.45 2800 մ. կէս ժամ հանգիստ եւ թեթեւ նախաճաշ:

12.00 յայտնուեցին մեր իրերը տանող երեք ձիերը:

12.10 շարունակում ենք վերելքը:

12.50 2940 մ. կարճ կանգառ:

13.10 3100 մ. կարճ կանգառ:

14.00 3250 մ. կանգառ փարախի մօտ, կանաչը նօսրանում է:

14.20 3310 մ. առաջին ճամբարի տեղում ենք, պատրաստում ենք վրանները: Խոհանոցը արդէն պատրաստ է. 15.00 ճաշի ժամն է:

15.00-16.00 ճաշում ենք Ահմէտի վրանում, տապակած միս, հաւ, բրինձով փլաւ, սոսկ եւ զրուցում օրուան տպաւորութիւններից, վաղուան ծրագրերից: Խօսում ենք հայերէն, անգլերէն, պարսկերէն, թուրքերէն, նոյնիսկ քրտերէն ու արաբերէն, եւ վերջում մի 50 կրամ «Արարատ» քոնեակ Կորինի:

խորհուրդով՝ արեան լաւ շրջանառութեան համար:

18.30 արդէն մտլթ է, ընթրում ենք եւ ամէն մէկը անցնում է իր վրանը, վաղը նոր դժուարութիւններ են սպասուում:

8 ՍԵՊՏ. 2008

7.30 արդէն ոտքի ենք, թէեւ տեղական ժամանակով դեռ 5.30 է:

8.00 նախաճաշում ենք հաց, պանիր, մեղր, կարագ, մսեղէն, հրուշակ, սուրճ, թէյ: Վերցնում ենք ճանապարհի թեթեւ սնունդ՝ ջուր, խնձոր, տուրմ, արմաւ:

9.20 ճանապարհուկեցինք 3310 մ. մեր առաջին ճամբարից:

10.10 3610 մ. կարճ կանգառ:

11.15 3750 մ. կարճ կանգառ եւ նախաճաշ:

11.45 3870 մ. կարճ կանգառ, մօտիկից երեւաց փոքր Արարատը:

12.30 4000 մ. կարճ կանգառ, ողջունում ենք 4000 մեթրը անցնելիս:

13.20 4085 մ. կամ (4100 ըստ տեղի նիշի) երկրորդ ճամբարում ենք:

Մենք Արագածի գագաթի բարձրութեան վրայ ենք:

14.30 ճաշարանի վրանում ենք, դպրոցում է թթուածնի պակասը, կադոնախը վատ է ալրուում, դրսում քամի է եւ կռտակում են սեւ ամպեր, եղանակը լաւ բան չի խոստանում:

Ամպրոպն որոտում է եւ մենք տեսնում ենք կայծակների պարպումները



մեղանից ցած, անսովոր տեսարան է, նոյնիսկ ամպերի միջից տեսնում ենք լուսաւորող դաշտը, կարծես օդանաւից ես նայում:

18.30 ընթրում ենք, բոլորը լուռ են, եղանակը անհանգստացնող է:

Պառկում ենք քնելու, առաւօտեան 4ին սկսելու ենք վերելք դէպի գագաթ:

9 ՍԵՊՏ. 2008

3.10 սկսեց ձիւն գալ. ցուրտ է, մառախուղ, տեսանելիութիւնը 1 մ.ից էլ պակաս:

4.00 ճաշարան-վրանում քննում ենք հետագայ անելիքը, առաջին որոշումը յետաձգել վերելքը յաջորդ օրուան:

6.30 եղանակը կայունացաւ, նորից հաւաքում ենք խորհրդի, առաջարկ կայ եւս 1 ժամի չափ սպասել

7.30 թէյի սեղանի շուրջը վերջնական որոշում ենք «գրոհել» գագաթը յուսարով եղանակի լաւացմանը:

8.30 մառախուղը նօսրանում է, շտապ որոշում ենք շարժուել, վրանները թողնում ենք Ահմէտին, նա պիտի հաւաքի ու իրերի հետ իջեցնի առաջին ճամբար: Զիբը արդէն գալիս են:

9.00 մենք վերցնում ենք ուսապարկերը եւ շարժում վեր:

10.30 4260 մ. կարճ կանգառ, երեւաց արեւը:

11.30 4305 մ. անցանք նշանաձողը, կարճ կանգառ:

12.15 4500 մ. անցանք նշանաձողը, քարերը ծածկուած են անսովոր երկար եղիամով, դպրոցում է ձիւնի հոտը, շնչելը դառնում է աւելի դժուար:

Կորիւնը եւ վաչիկը ճանապարհուկեցին դէպի գագաթ: Նրանք տեղ հասան 1.5 ժամ յետոյ: Գագաթում օդը փոթորկալից էր: Խիստ եղանակ էր:

Նրանք շուրջ 10 րոպէ գագաթում մնալուց եւ մի քանի պատկեր վերցնելուց յետոյ ուղեցոյցի հետ վերադարձան սարը գառիվար: Նրանց հանդիպեցին եւ միացան խմբին առաջի ճամբարում: Մէկ գիշեր մնալուց յետոյ, յաջորդ առաւօտ խումբը ճանապարհուկեց դէպի Պայաղէտ:

Միւս առաւօտեան խումբը ճանապարհուկեց դէպի Երեւան:





Էլի Հուլիշեան

«ՄԱՐՁԻԿ»Ի «ՔԱՋԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւնը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ: «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՉՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Չարեհ Գարակիւլեան, Յակոբ Թոքաթեան, Վազգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էիրամճեան, Արթո Սարգսրեան, Տիանա Հաճէթեան, Հրանդ Տէտեան, Բարգէն Կարապետեան, Երուանդ Շահինեան եւ Կարապետ Ն. Թովթեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ճորժ Տաթևեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի 90ԱՄԵԱԿԻ ՄԵԾԱՇՈՒՔ...

(Շարունակուած 25րդ էջէն)

Ճաշի սպասարկութենէն ետք, բեմ հրաւիրուեցան երգիչ Յարութ Փամպուքճեան եւ իր նուագախումբը Գայլֆորնիայէն: Խանդավառ մթնոլորտի մէջ, ներկաները պարեցին եւ վայելեցին աշուղական եւ ազգագրական երգերու ճոխ շարան մը:

Դադարին, տեղի ունեցաւ 90ամեակի կարկանդակի հատումը, ձեռամբ օրուան նախագահներ՝ տէր եւ տիկին Հայկ եւ Սիլվա Սեղրակեաններու: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան որոշումով, «Մառաշտեան» շքանշան ստացան միութեան մէջ երկար տարիներու վաստակ ունեցող հետեւեալ Հ.Մ.Ը.Մ.ականները.

Եղբ. Սարգիս Ստեփանեան, Պոսթոնի մասնաճիւղէն:

Եղբ. Վարդգէս Վարդանեան, Նիւ Եորքի մասնաճիւղէն:

Եղբ. Պերճ Մասոյեան, Նիւ Ճորջիի մասնաճիւղէն:

Եղբ. Կարպիս Թոսունեան, Նիւ Ճորջիի մասնաճիւղէն:

Քոյր Լուսին Սարեան, Նիւ Ճորջիի մասնաճիւղ

Գիշերուան ուշ ժամերուն, անգամ մը եւս բեմ հրաւիրուեցաւ Յարութ Փամպուքճեան եւ իր աղջային-յեղափոխական երգերով խրախուսեց ներկաները:

Ներկաները ճաշկերոյթ-պարահանդէսէն մեկնեցան ուրախ տրամադրութեամբ, տոգորուած Հ.Մ.Ը.Մ.ի բարձրանալու եւ բարձրացնելու վսեմ նշանաբանին ոգիով, յաւելեալ եռանդով ու կորովով շարունակելու համար միութեան 90ամեայ յաղթական եւ պանծալի երթը:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԵՊԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ «ԳՐԻԳՈՐ ՅԱԿՈԲԵԱՆ»
ԱՐԻ-ԱՐԵՆՈՅՇ ՄԻԱԲՈՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ